



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ  
ԶԵԿՈՒՅՑ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ  
ՀԻՄՆՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝  
ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔ

*Զեկույցի ուղերձն է՝  
«Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր  
կարգապահությունը մարտունակ բանակի հիմքն է»*

ԵՐԵՎԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ 2021



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**



**ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ**

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ  
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔ**

***Զեկույցի ուղերձն է՝***

***«Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր  
կարգապահությունը մարտունակ բանակի հիմքն է»***

**ԵՐԵՎԱՆ**

**ՆՈՅԵՄԲԵՐ 2021**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՍՈՒՅՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.. 4**  
**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ..... 7**  
**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ**  
**ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ .....13**  
**ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ..... 28**  
**ԱՌԱՋԱՐԿՆԵՐ..... 48**

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՍՈՒՅՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի՝ գործունեության առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը: Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող սահմանադրական հաստատություն՝ Պաշտպանի նպատակներից է ապահովել բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը: Այս նպատակին հասնելու համար՝ Պաշտպանը նպաստում է իրավունքի գերակայության ապահովմանը, ինչը դրական ազդեցություն է ունենում զինծառայողների արժանապատվության, կյանքի որակի և նրանց մարտական ոգու բարձրացման վրա: Դրա արդյունքում, բնականաբար, բարձրանում է զորքերի մարտունակությունը, որի խթանիչ ուժը զինվորական կարգապահությունն է:

Զինվորական կարգապահությունը հիմնվում է իրավունքի գերակայության և օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա<sup>2</sup>: Այս առումով, զինվորական կարգապահությունը՝ հիմնված իրավունքի գերակայության վրա, զուգահեռ ընթանում է զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման սկզբունքների հետ: Մեկը մյուսին փոխլրացնում է: Իսկ մեծ հաշվով՝ բանակում մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը սկզբունքորեն դժվար է պատկերացնել առանց զինծառայողների շրջանում ամուր կարգապահության:

**Այլ կերպ՝ իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիք է:**

<sup>1</sup> Սույն արտահերթ զեկույցում այսուհետ՝ նաև Պաշտպան:

<sup>2</sup> ՀՀ Զինվախ ուժերի կարգապահական կանոնագիրք, հոդված 2, մաս 2 (կանոնագիրքը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի 21.03.2021 թ. ՀՕ-91-Ն օրենքով):

Ձինվորական կարգապահության խնդիրներին առնչվող գրավոր և բանավոր բողոքները, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարներին ահազանգերը, զորամասեր և զինվորական այլ հաստատություններ Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման այցերը, սպաների և զինվորների հետ առանձնազրույցները, նրանց ընտանիքների հետ հանդիպումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ բանակում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունն այսօր առաջնային արդիականություն է:

Ձինված ուժերում կարգապահության ամրապնդման առաջնայնության մասին գնահատականը հիմնված է նաև Պաշտպանին առընթեր Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի<sup>3</sup> ուսումնասիրությունների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, զորամասը ինքնական թողնելու, բռնություն գործադրելու և այլն), քաղաքացիական հասարակության հետ համագործակցության արդյունքների, իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց պարզաբանումների վերլուծությունների ու բազմակողմանի ուսումնասիրությունների վրա:

Սույն արտահերթ հրապարակային զեկույցը, որը մշակվել է Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից, նպատակ ունի վեր հանել զինված ուժերում առկա որոշ խնդիրներ, տալ կոնկրետ գնահատականներ և դրանց լուծմանն ուղղված թիրախային առաջարկներով հասնել Հայաստանի զինված ուժերում իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահության ամրապնդմանը:

**Ոլորտի խնդիրները գնահատվել են նաև 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններից հետո հետպատերազմյան վիճակի հաշվառմամբ:**

---

<sup>3</sup> Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի մասին տեղեկատվություն՝ հասանելի է <https://ombuds.am/am/site/SoldiersAdjunctDefender> հղումով:

Ուսումնասիրության համար ելակետ է ընդունվել այն, որ զինվորական մասնագիտությունը նույնպես կոչված է երաշխավորելու մարդու արժանապատվությունը, պետության պաշտպանությունն ու անվտանգությունը՝ ապահովելով մարդու իրավունքները, իսկ դա հնարավոր է միայն, եթե առաջնահերթ լինի արհեստավարժությունը և հարգանքը պետի ու ենթակայի նկատմամբ:

Զեկույցի գլխավոր ուղերձն է՝

**«Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը մարտունակ բանակի հիմքն է»:**

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծումը ժողովրդավարական յուրաքանչյուր պետության առաջնահերթություններից է: Հայաստանի համար այն է՛լ ավելի կարևոր է, քանի որ հանրային ընկալումներում բանական արդարացիորեն համարվում է անկախ պետականության ամենաարժեքավոր ձեռքբերումներից մեկը:

Զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը: Սահմանադրության այս դրույթը փոխաբերվում է սահմանադրական մեկ այլ պահանջով՝ «զինված ուժերը ... քաղաքացիական վերահսկողության ներքո են»<sup>4</sup>:

Հատկանշական է, որ Հայաստանի պաշտպանությունը ենթակա է կազմակերպման և իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա: Դրանով է պայմանավորված այն մոտեցումը, որ ժողովրդավարական ցանկացած երկիր իր անվտանգությունն ապահովելու հիմնարար գործոններից պետք է համարի մարդու իրավունքների և ազատությունների հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները: Եվ դա ունի սկզբունքային նշանակություն, քանի որ անվտանգությունը չի հակադրվում մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը: **Ավելին, անվտանգությունը և մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը համարժեք երևույթներ ու միմյանց լրացնող արժեքներ են:**

«Վազգային անվտանգության ռազմավարությամբ՝ ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և իրավունքի գերակայությունն արդյունավետ պետական կառավարման համակարգի և երկրի ներքին

---

<sup>4</sup> «Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով), հոդված 14:

դիմակայունության զարգացման երաշխիքն են և հանդիսանում են Հայաստանի հիմնարար ազգային շահ: Ժողովրդավարական ինստիտուտների հզորացումը և իրավունքի գերակայությունը Հայաստանի ազգային անվտանգության ապահովման հիմնական երաշխիքներից են<sup>5</sup>: Հատկանշական է, որ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը որպես անվտանգ պետության երաշխավորման կարևորություն ընդգծված էր նաև 2007 թվականին հաստատված Ազգային անվտանգության ռազմավարությամբ, որով համամարդկային արժեքները՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և իրավական պետության հաստատման սկզբունքները, ընդունված են որպես «պետական գաղափարախոսության անբաժանելի մաս»<sup>6</sup>:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ կետը սահմանում է, որ պետությունն իրավասու է կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունի հայեցողության որոշակի շրջանակ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես նշել է, որ յուրաքանչյուր պետություն իրավասու է կազմակերպելու զինվորական կարգապահության սեփական համակարգը և այս հարցում որոշակի հայեցողության շրջանակ ունի, քանի որ տարբեր պետությունների համակարգեր տարբեր են<sup>7</sup>:

ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի (այսուհետ՝ Կարգապահական կանոնագիրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և

<sup>5</sup> Հավանության է արժանացել Անվտանգության խորհրդի կողմից 2020 թվականին, հասանելի է <https://www.gov.am/am/National-Security-Strategy/> հղումով:

<sup>6</sup> Հաստատվել է ՀՀ Նախագահի 07.02.2007 թ. թիվ ՆՀ-37-Ն հրամանագրով:

<sup>7</sup> Տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդերլանդների (Engel and others v. Netherlands) գործով 1976 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 5100/71, կետ 57-59:

ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

Ձինված ուժերի մարտունակությունն ուղղակիորեն կապված է զինվորական կարգապահության հետ: Ձինվորական կարգապահության հիմնական նպատակն է համակարգել զինծառայողների վարքագիծը և գործողությունները, նրանց միջև հաստատել հարաբերությունների այնպիսի կառուցակարգ, որը կապահովի կարգուկանոն:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարտական գործողությունների ընթացքում և դրանից հետո բանակը բախվել է կարգապահության և կանոնադրական կարգի պահպանման հետ կապված մի շարք լուրջ խնդիրների, որոնք հրատապ լուծումներ են պահանջում: **Հետևաբար, այսօր, առավել քան երբևէ, ժամանակի հրամայականն է ստեղծված իրավիճակի համար լավագույն լուծումներ գտնելը, առկա արատավոր երևույթների հետագա զարգացումները կանխելը, մարդու իրավունքների հարգման ու կարգապահության ամրապնդման հիման վրա զինված ուժերի մարտունակության բարձրացումն ու զինծառայողի կարգավիճակի անընդհատ բարելավումը:**

Կարգապահության ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար կարևոր է զինծառայողի մեջ Սահմանադրության, օրենքի և կանոնակարգումների նկատմամբ հարգանքի, դրանով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ խոր հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը: Ձինված ուժերում կարգապահության ամրապնդման ցանկացած մեխանիզմ ներդնելիս հիմքում պետք է դնել զինծառայողի արժանապատվության պաշտպանության և նրա իրավունքների խթանման բարձր ձգտումն ունենալու հանգամանքը:

Ձինվորական ծառայության բնույթով պայմանավորված որոշակի սահմանափակումներ հաշվի առնելով հանդերձ՝ հարկ է նկատի ունենալ, որ

զինծառայողները, նախևառաջ, համազգեստով քաղաքացիներ են, ովքեր նույնպես օժտված են իրավունքներով: Հազնելով զինվորական համազգեստ՝ նրանք շարունակում են մնալ քաղաքացիներ և, առանց զինվորական կարգապահությանը վնաս հասցնելու, պետք է օժտված լինեն այն նույն իրավունքներով, ինչ ունեն քաղաքացիական անձինք:

Կարևոր է ընդգծել, որ «համազգեստով քաղաքացի» սկզբունքի (կամ կոնցեպտի) համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված **իրավունքների նկատմամբ հարգանքը չպետք է կանգ առնի զորանոցների դարպասների շեմին**<sup>8</sup>: Որպես համազգեստով քաղաքացի՝ զինծառայողն իրեն տեսնում է ինչպես զինված ուժերի անդամ, այնպես էլ հասարակության մաս<sup>9</sup>:

**Ակնհայտ է, որ բանակն ու հասարակությունը միաձուլված են, մեկն առանց մյուսի հնարավոր չէ պատկերացնել, նրանց շահերն ու հետաքրքրությունները հաճախ միատեղվում են: Հետևաբար, որպես կայուն կարգապահության երաշխիքի տարր՝ շատ կարևոր է բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:** Դա առանցքային է նաև զինված ուժերում մարդու իրավունքներն արդյունավետ իրացնելու տեսանկյունից: Այն իր հերթին կնպաստի զինվորական հաստատություններում իրավունքի գերակայության վրա հիմնված կամ դրա ներքո ամուր կարգապահություն ապահովելուն: Այս ամենով հանդերձ՝ «համազգեստով քաղաքացի» կոնցեպտի արդյունավետ և թիրախային իրացումը խթանիչ գործոն կարող է հանդիսանալ քաղաքացիներին զինված ուժեր ներգրավելու համար: **Սա պետք է հատկապես հաշվի առնել:**

**Իրավունքի գերակայության ներքո ամուր կարգապահության ապահովման հարցում առանցքային դերակատար է Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես սահմանադրական անկախ պետական ինստիտուտ:** Մարդու իրավունքների պաշտպանի համար սկզբունքային է պաշտպանական գերատեսչության հետ չվնասելու սկզբունքով աշխատելը: Սա շատ կարևոր է

<sup>8</sup>Տե՛ս, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով, «Զինծառայողների մարդու իրավունքները», Doc.10861, պարբ. 53-54, <https://clck.ru/Qf3gP>:

<sup>9</sup> Տե՛ս, <https://clck.ru/Qf5Jd>:

հատկապես զինված ուժերում իրավունքի գերակայության պահպանման, զինված ուժերի կառույցների թափանցիկության ու պատասխանատվության բարձրացման, բանակում կարգապահության մշտապես կատարելագործման միասնական նպատակի իրագործման և բազմաթիվ այլ հարցերում: Համագործակցության արդյունքում բազմաթիվ, այդ թվում՝ համակարգային բնույթի, խնդիրներ են լուծվում: Արդյունքում, Պաշտպանն անմիջական դրական ներգործություն է ունենում ինչպես առանձին զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու, այնպես էլ զորքերի մարտական համախմբվածության վրա: Նույնիսկ ակտիվ մարտական գործողությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի, Պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի հետ ակտիվ համագործակցությունը բազմաթիվ դեպքերում կանխել է զինծառայողների իրավունքների խախտումները, նպաստել իրավունքների վերականգնմանն ու պաշտպանությանը:

Այս մասով մնում է հավելել, որ բանակում ամուր կարգապահություն ապահովելու գրավականներից է գրագետ զինծառայողների արհեստավարժ մոտեցումը ծառայության նկատմամբ: Այն իր հերթին անխուսափելիորեն ենթադրում է մարդու իրավունքների ապահովում, ներառյալ՝ հարգանք մարդու արժանապատվության հանդեպ: Իհարկե, խոսքը վերաբերում է հավասարապես ինչպես շարքային, այնպես էլ ենթասպայական ու սպայական կազմերի զինծառայողներին:

**Որպեսզի զորքերում կարգապահությունը լինի կայուն և երաշխավորված՝ զինվորականների կողմից «լիազորությունների (ներառյալ՝ պարտականությունների) գրագետ կատարումը» պետք է ուղեկցվի «ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցմամբ», իսկ այստեղ անպայմանորեն պետք է բացառվի «ծառայակցի (ներառյալ՝ ենթակայի) նկատմամբ ոչ արժանապատիվ վերաբերմունքը»:** Բանաձևի տեսքով կունենանք հետևյալ պատկերը.

$$Գ + Պ - Վ = Կ$$

Այստեղ՝ «Գ»-ն լիազորությունների գրագետ կատարումն է (գրագիտություն), «Պ»-ն՝ ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցումը

(պատասխանատվություն), «Վ»-ն՝ ոչ արժանապատիվ վերաբերմունքը ծառայակցի նկատմամբ (վերաբերմունք), իսկ «Կ»-ն՝ զինվորական կարգապահությունը:

**Սա է պրոֆեսիոնալ միջոցների իրականացմամբ զինվորական կարգապահության ամրապնդման ողջամիտ բանաձևը: Նման մոտեցմամբ հնարավոր է ապահովել թե՛ զինվորական կարգապահությունը, թե՛ իրավունքի գերակայության վրա հիմնված մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը<sup>10</sup>:**

---

<sup>10</sup> Տե՛ս, Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջ 985-992:

**ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՕՂԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ  
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

Ինչպես նշեցինք, իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը մարդու իրավունքների հարգման և մարտունակ բանակի գրավականն է: Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը միայն բարոյական պարտականություն չէ: Նման պահանջը մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասն է կազմում, ինչով պայմանավորված՝ պետությունը և առանձին անձինք պարտականություն են կրում հարգել և պաշտպանել մարդու իրավունքները բանակում:

Զինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը: **Ըստ միջազգային և սահմանադրական իրավական չափանիշների՝ պետությունը պարտավոր է ապահովել զինծառայության այնպիսի պայմաններ, որոնք կհամապատասխանեն անձի արժանապատվությանը, իսկ զինծառայության մեթոդներն ու ընթացքը զինծառայողներին տանջանքների ու սթրեսի չեն ենթարկի և չեն անցնի կարգապահության մեթոդների խստության սահմանը:**

Բանակաշինության և ռազմաիրավական բարեփոխումների ժամանակ անհրաժեշտ է կատարել զինված ուժերում ամուր կարգապահության հաստատմանը խոչընդոտող հիմքերի ու պատճառների ուսումնասիրություններ և համապատասխան եզրահանգումների արդյունքում տանել թիրախային աշխատանքներ այս միկրոմիջավայրում իրավախախտումները նվազագույնի հասցնելու և հնարավորին բացառելու ուղղությամբ:

Զինված ուժերում կարգապահությունը մշտապես ամուր պահելու նպատակով հնարավորությունները ենթակա են դիտարկման և գնահատման թե՛ փաստացի առկա, և թե՛ նոր ռեսուրսների ու միջոցների ներգրավման մասով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ բանակում կարգապահության ու կարգուկանոնի ապահովման գործոնները բազմաթիվ են. դրանցից յուրաքանչյուրը կարևոր և բոլորը միասին

անհրաժեշտ են բանակում երաշխավորված ու բարձր մակարդակի կարգապահություն ունենալու համար: Նշվածից ելնելով՝ սույն ուսումնասիրությունում կայուն կարգապահության երաշխիքի տարրերը դիտարկվել են հետևյալ տեսանկյունից.

Ձինված ուժերի բոլոր կազմերի հրամանատարների (ավագների) կողմից լիազորությունների (նաև պարտականությունների) գրագետ կատարում, ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցում, ծառայակցի, հատկապես՝ ենթակայի (ստորադասի) նկատմամբ արժանապատիվ վերաբերմունք, ներառյալ.

ա) բարձրագույն սպայական ու ավագ սպայական կազմերի զինծառայողների իրավունքահեն ղեկավարում և ուղղորդիչ կառավարում, ոչ կանոնադրային հարաբերությունների նկատմամբ անհանդուրժողական մոտեցում,

բ) կրտսեր սպայական ու ենթասպայական կազմերի զինծառայողների կարողությունների զարգացում և նրանց դերի ու ազդեցության բարձրացում:

**Բարձրագույն սպայական ու ավագ սպայական կազմերը զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ապահովման գլխավոր երաշխավորն են:**

Նրանք մշտապես պետք է դրական օրինակ ծառայեն ենթակա անձնակազմի համար, խրախուսեն նրանց արժանիքները՝ բնականաբար չհանդուրժելով կարգուկանոնի որևէ խախտում: Վերադաս հրամանատարության համար կարևոր է իմանալ զինվորական կարգապահության և անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը, հասնել ենթակա հրամանատարների կողմից զինվորական կարգապահության ամրապնդման պահանջների, խնդիրների ու եղանակների միասնական ըմբռնման: **Անքննելի է նաև, որ ավագ սպայական և բարձրագույն սպայական կազմերն ահռելի ավանդ են ներդրել բանակաշինության, իսկ հիմա էլ պաշտպանական բարեփոխումների գործում: Մեկ բան հստակ է՝ այդ կազմի սպաների դերն ու հեղինակությունը բանակում, նրանց ներդրումը կարգապահության հաստատման հարցում դժվար է գերագնահատել:**

Այս ամենով հանդերձ, անհնար է ստորադասել նաև **կրտսեր սպայական և ենթասպայական կազմերի դերը, որոնք արդարացիորեն համարվում են զինված ուժերում կարգապահության ամրապնդման ամենաառանցքային օղակներից:** Սա

բացատրվում է նրանով, որ այս օղակներն ավելի մոտ են կանգնած զինվորներին, լավ են տիրապետում զինվորների շրջանում տիրող ընդհանուր իրավիճակին: Մյուս կողմից, կրտսեր սպայական և ենթասպայական կազմերը վստահություն են վայելում նաև ավագ հրամանատարական կազմի շրջանում:

Իհարկե, նշված կազմերի զինծառայողներից յուրաքանչյուրի դերը կարգապահության երաշխավորման գործում կարևոր է, սակայն **գեկույցի այս հատվածում շեշտադրումն առավելապես արված է կոնկրետ խումբ սպաների վրա՝ սպա-հոգեբան, հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի (սպա-իրավաբան) և հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ:** Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ սպա-հոգեբանը, սպա-իրավաբանը և հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալը զինծառայողների հոգեբանական և իրավական դաստիարակության հիմնական պատասխանատուներն են և ունեն հիմնային դեր զորքերում կարգապահության ապահովման գործում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների, զորամասեր այցերի, Մարդու իրավունքների պաշտպանին առնչված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստերում բարձրացված հարցերի ուսումնասիրությունը վեր են հանել մի շարք խնդիրներ և ևս մեկ անգամ փաստել, որ զինվորական կարգապահության համար էական դերակատարում ունեցողների՝ սպա-հոգեբանի, հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի (իրավաբանի) կարողությունների զարգացման և այս օղակների ուժեղացման անհրաժեշտություն կա: Նրանց կարողությունների զարգացումը նախ կարևորվում է նոր ներգրավվող զինծառայողների (հատկապես պարտադիր ժամկետային զինծառայողների) ադապտացիոն գործընթացը կազմակերպելու, նրանց հետ ճիշտ հոգեբանական և իրավական-դաստիարակչական աշխատանքներ տանելու առումով:

**Կարգապահության ապահովման հարցում բացառիկ դեր է վերապահված սպա-իրավաբանին:**

ՀՀ ՀՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 103-րդ և 104-րդ հոդվածները սահմանում են, որ գնդի հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով

օգնական-սպան պատասխանատու է գնդում իրավական աշխատանքի կազմակերպման համար: Նա պարտավոր է զորամասի մյուս ծառայությունների հետ համատեղ մշակել և իրականացնել զորամասում օրինականության պահպանման ապահովմանը ուղղված միջոցառումներ, անձնակազմին տեղեկատվություն տալ գործող օրենսդրության մասին, զինծառայողներին ուսուցանել ծառայության իրավական հիմունքները, միջոցառումներ անցկացնել անձնակազմի մեջ իրավական կուլտուրայի ձևավորման, նրանց կողմից օրենքների, զինվորական երդման, զինվորական կանոնադրությունների և ծառայությունը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի պահպանման ուղղությամբ, մասնակցել զորամասի անձնակազմի իրավական դաստիարակման կազմակերպմանը, զորամասի հրամանատարի ցուցումով անցկացնել ծառայողական քննություն և այլն:

Ջորամասեր մոնիտորինգային և այլ նպատակային այցերի արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Օրինակ՝ պաշտպանական տեսանկյունից կարևոր առաջադրանք իրականացնող զորամասերից մեկում արձանագրվել է, որ զորամասը չունի սպա-իրավաբան, այսինքն՝ հաստիքը կա, բայց այն համալրված չէ: Դա խնդրահարույց է, քանի որ բազմաթիվ իրավական (և ոչ միայն իրավական) խնդիրներ կարող են հեշտությամբ լուծվել, եթե տվյալ զորամասում արդյունավետ աշխատում է սպա-իրավաբանը:

Ջորամասերից մյուսում Պաշտպանի ներկայացուցիչներին սպա-իրավաբանը ներկայացրել է, թե ինչպես է անցկացնում ծառայողական քննությունները, և պրակտիկայում ինչ խնդիրներ են առաջանում: Նշել է, որ զինծառայողները ծառայողական քննության ընթացքում ծանոթացվում են իրենց իրավունքներին (ներկայացրել է նաև իրավունքների իրազեկման թերթիկը, որը զինծառայողը ծանոթանալուց հետո ստորագրում է), բայց հաճախ՝ զինծառայողները, ում նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, չեն բողոքարկել տրված կարգապահական տույժերը<sup>11</sup>:

---

<sup>11</sup> Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ զինծառայողը, ում նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, քննությանը մասնակցելու պահից գրավոր ծանոթացվում է անցկացվող ծառայողական քննության շրջանակներում իր իրավունքներին և պարտականություններին, իրավունք ունի ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության,

Պաշտպանի գնահատմամբ՝ այս խնդիրը ոչ այնքան քննությունը լավ իրականացնելու, որքան կոնկրետ խումբ զինծառայողների իրավագիտակցության հետ է կապված: **Մտահոգիչ է կոնկրետ խումբ զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը:** Դա հատկապես վերաբերում է պարտադիր ժամկետային զինծառայողներին: Իրավական իրազեկվածության պակասն էլ իր հերթին կարող է լինել ոչ կանոնադրային հարաբերությունների հաստատման պատճառներից մեկը: Օրինակ՝ զինծառայողների մեծ մասը տեղյակ չէ, որ կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամանով, և իրենք ունեն դրանց հետ ծանոթանալու ու բողոքարկման իրավունք: Զորամասերում զինծառայողների հետ առանձնազրույցները ևս ցույց են տալիս, որ կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում<sup>12</sup>: **Պարտադիր ժամկետային զինծառայողների իրավագիտակցության բարձրացման համար պետք է կազմակերպվեն թիրախային աշխատանքներ, կոնկրետ ծրագրով և հստակ չափանիշներով: Իսկ այս գործում մեծ է լինելու հենց սպա-իրավաբանի դերակատարումը:**

Զորամասեր կատարված այցերի ընթացքում ծառայողական քննություններն անցկացնող սպա-իրավաբաններին մշտապես առաջարկվում է զինծառայողին նրա իրավունքները գրավոր իրազեկելու հետ մեկտեղ, բանավոր ևս պարզաբանել նրա իրավունքները, այդ թվում տեղեկացնել տույժը բողոքարկելու իրավունքի մասին:

Առաջին հայացքից փոքր, բայց իրականում կարգապահության տեսանկյունից խնդրահարույց մեկ այլ խնդիր էր կարելի է նշել: Այսպես, մի շարք զորամասերում արձանագրվել է, որ **զինծառայողների կողմից զինվորական գրքույկը կորցնելու դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում զինծառայողներին տրվում են**

---

արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու:

<sup>12</sup> Օրինակ, Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2020 թվականի ընթացքում ՊՆ մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնում ստացվել է կարգապահական տույժերի վերաբերյալ 10 բողոք, որոնք ըստ վերադասության զեկուցվել են, 60 տոկոսի դեպքում տույժը հանվել կամ փոփոխվել է:

**կարգապահական տույժեր:** Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի ընթացքում զինվորական գրքույկը կորցնելու հանգամանքները պարզելու նպատակով անցկացվել է 150-ից ավելի ծառայողական քննություն: Հատկանշական է, որ բոլոր քննությունների արդյունքում զինծառայողների նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժ: Նման պրակտիկան խնդրահարույց է՝ հատկապես, որ Կարգապահական կանոնագրքով զինվորական փաստաթղթերը կորցնելու համար տույժ կիրառելու հնարավորություն նախատեսված չէ (<< կառավարության 2018 թվականի թիվ 1269-Ն որոշմամբ սահմանված լինելը հիմք չէ զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար)<sup>13</sup>: **Օրենքով չնախատեսված հիմքով տույժ կիրառելն արժեզրկում է կարգապահությունն ամրապնդելուն ուղղված տույժի ինստիտուտը, խաթարում է օրենքի հանդեպ հարգանքի և իրավունքի գերակայության երաշխիքի ապահովման արժեհամակարգը:**

Խնդիրներ են արձանագրվել նաև հրամանը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար զինծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված<sup>14</sup>: Նման խնդիրները բացառելու նպատակով սպա-իրավաբաններին առաջարկվել է ուժեղացնել հսկողությունը ծառայողական քննությունների անցկացման նկատմամբ:

Ընդհանուր առմամբ, կարող ենք փաստել, որ հրամանատարի սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական-սպայի (սպա-իրավաբանի) ինստիտուտը ուժեղացման կարիք ունի հատկապես որակյալ ծառայողական քննությունների իրականացնելու առումով. հաճախ նրանց պատրաստվածությունն ու կարողությունները բավարար չեն:

---

<sup>13</sup> Ճիշտ է, Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանով որպես ծառայողական քննության նշանակման առիթ նախատեսված է զինծառայողի ծառայողական վկայականի (զինվորական գրքույկի), ինչպես նաև հատուկ պահպանության ենթակա այլ փաստաթղթի(երի) կորցնելը կամ փչացնելը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ծառայողական քննություն անցկացնելու այդպիսի առիթը որևէ պարագայում չպետք է կարգապահական կանոնագրքով չնախատեսված տույժ կիրառելու հիմք հանդիսանա (դա չի ունենա լեգիտիմ նպատակին (legitimate aim) բավարարող հիմնավորվածություն):

<sup>14</sup> Խնդրի լուծման ուղիները, կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու կոնկրետ առաջարկներն արտացոլված են Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ, էջ 542:

Սպա-իրավաբանը պետք է առավել նախաձեռնող (պրոակտիվ) լինի զորամասում իրավական ուսուցման ու դաստիարակության, իրավական մշակույթի ձևավորման, զորամասում օրինականության պահպանման հարցերում: Իհարկե, սպա-իրավաբաններին մասնագիտական օգնություն են ցույց տալիս ինչպես Պաշտպանության նախարարության, այնպես էլ Գլխավոր շտաբի իրավաբանական ծառայությունները, բայց անելիքի մեծ բեռը պետք է իրենց վրա վերցնեն հենց սպա-իրավաբանները: Միայն «Իրավական անկյունների» ֆորմալ առկայությունը չեն կարող լուծել իրավագիտակցության բարձրացման խնդիրը:

Սույն զեկույցի կազմման աշխատանքներ իրականացնելիս Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչպես են զորամասերում ուսուցանվում կարգապահությանն առնչվող թեմաները, արդյոք զորամասերը համալրված են կարգապահական հարցերին վերաբերող տեղեկատվական նյութերով (իրազեկման ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ և այլն): Հարցադրմանն ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր չորեքշաբթի զորամասերում անցկացվում են զինվորական կարգապահությանն առնչվող թեմաներով պարապմունքներ, մշտապես վերլուծվում է զինվորական կարգապահության վիճակը, ուսումնասիրվում են հիմնահարցերը և նախորոշվում աշխատանքների ուղղությունները: Նախարարության տեղեկացմամբ՝ տարբեր տարիներին հրատարակվել և զորքեր են առաքվել շուրջ երկու տասնյակ մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ և այլն: Իհարկե, ողջունելի է զորամասերում իրավական-տեղեկատվական անհրաժեշտ բազայի առկայությունը, սակայն դրանք պետք է ճիշտ մոտեցմամբ «մատուցել» զինծառայողներին: Այս հարցում ևս առանցքային կարող է լինել սպա-իրավաբանի դերը:

**Ջորջերում կարգապահության և կանոնադրական կարգի երաշխավորման գործում մեծ է սպա-հոգեբանի<sup>15</sup> դերը:**

---

<sup>15</sup> Ներքին ծառայության կանոնագրքի 126.1-րդ հոդվածի համաձայն՝ գնդի սպա-հոգեբանը խաղաղ և պատերազմական ժամանակ պատասխանատու է գնդում հոգեբանական աշխատանքի

Ձորամասեր այցերի ընթացքում արձանագրվել են սպա-հոգեբանների աշխատանքի դրական օրինակներ<sup>16</sup>: Դրան հակառակ, որոշ զորամասերում նույնիսկ առկա չեն սպա-հոգեբանների հաստիքներ, իսկ մի քանիսում՝ հաստիքները թափուր են:

Պաշտպանության նախարարության պարզաբանմամբ՝ զորամասերում, որտեղ նախատեսված չեն կամ թափուր են սպա-հոգեբանների հաստիքները, հոգեբանական ապահովմանն ուղղված աշխատանքներն իրականացվում և կանոնակարգվում են զորամասի և ստորաբաժանումների հրամանատարների բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալների, ինչպես նաև վաշտերի հրամանատարների կողմից:

Մինչդեռ, ամենօրյա ռեժիմով խիստ մասնագիտական մոտեցում և հատուկ ուշադրություն պետք է դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին: **Այստեղ խոսքը հավասարապես վերաբերում է ինչպես շարքային և ենթասպայական, այնպես սպայական կազմերի զինծառայողներին: Նրանց հետ անհատական հոգեբանական աշխատանքների իրականացումը պետք է կրի պարբերական բնույթ: Հատկապես մարտական գործողությունների մասնակից զինծառայողներին պարբերաբար հոգեբանական աջակցության տրամադրումը սկզբունքային կարևորություն ունի առողջ զինվոր և մարտունակ բանակ ունենալու տեսանկյունից:**

Շատ կարևոր է, որպեսզի նրանք պատշաճ վերականգնողական կուրս անցնեն, պարբերաբար ստանան հոգեբանական աջակցություն, զորամասերում գտնվեն

---

կազմակերպման, անձնակազմի հոգեբանական վիճակի, զինծառայողների հոգեկան կայունության պահպանմանն ուղղված աշխատանքների համար:

<sup>16</sup> Ձորամասերից մեկի սպա-հոգեբանը տեղեկացրել է, որ ամեն օր զրույց է ունենում զինծառայողների հետ, անցկացնում գիտելիքների ստուգման տարբեր թեստեր, որոնց զինծառայողները մասնակցում են հետաքրքրվածությամբ: Ըստ նրա՝ զորամասերում հոգեբանների կարգավիճակն անհրաժեշտ է բարձրացնել: Առավել շատ անձնակազմ ունեցող զորամասերում պետք է լինեն մի քանի հոգեբաններ, նրանք չպետք է ընդգրկվեն այլ ծառայություններում (օրինակ՝ վերակարգում), այլ ամենօրյա ռեժիմով պետք է շփում ունենան զինծառայողների հետ՝ բացահայտելու նրանց բարոյահոգեբանական վիճակը: Մեկ այլ զորամասում զինծառայողները հայտնել են, որ զորամասի հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալը հաճախ բարոյահոգեբանական աշխատանքներ է տանում իրենց հետ և կարևորում միմյանց հանդեպ հանդուրժողականություն դրսևորելու անհրաժեշտությունը: Իհարկե, օրինակելի է առանձին զորամասերում սպա-հոգեբանների նման աշխատառճը, ինչպես նաև ընդունելի այն տեսակետը, որ անձնակազմի հաշվառմամբ պետք է զորամասերում լինեն մի քանի սպա-հոգեբաններ, որպեսզի զինծառայողների հետ բարոյահոգեբանական աշխատանքներն իրականացվեն պարբերաբար և ամենօրյա ռեժիմով:

սպա-հոգեբանների դինամիկ հսկողության ու հոգաձության ներքո: Հոգեբանական աջակցության տրամադրումը կարող է հետագայում կանխել հոգեկան առողջության հետ կապված հիվանդությունների ծեռքերումը, դրականորեն ազդել զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի և մարտունակության վրա<sup>17</sup>: Հոգեպես առողջ զինծառայողն է ընդունակ ամուր պահել զինվորական կոլեկտիվում կարգապահությունն ու մարտական ոգին: Հոգեբանական աջակցության ուժեղացումը, զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները, հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, զինծառայողների հետ անհատական աշխատանքներն իրավախախտումների կանխարգելման լավագույն միջոց կարող են հանդիսանալ: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր զորամասերում առկա լինեն սպա-հոգեբանի հաստիքներ, իսկ թափուր հաստիքները կարևոր է, որ համալրվեն: Համալրման նպատակով կարելի է քննարկել նաև նման մասնագետների պատրաստմանը խթանելու հնարավորությունները (օրինակ՝ ռազմական համալսարաններում կադրերի պատրաստման միջոցով):

Սպա-հոգեբանի դերը մեծ է հատկապես իրավախախտումներից տուժած անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու տեսանկյունից: Զինվորական կարգապահության ամրապնդման գործում սկզբունքային է իրավախախտումներից տուժած անձանց պաշտպանությունը: Ճիշտ է, իրավախախտումներից տուժած անձանց նկատմամբ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են օրենքով սահմանված

---

<sup>17</sup> Պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած և բուժման մեջ գտնվող զինծառայողներին Երևանի կայազորային և Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալների հաստիքային և քաղաքացիական կազմակերպությունների (օրինակ՝ «Այգ» հոգեվերականգնողական ծառայությունների կենտրոն)՝ կամավոր հիմունքներով աջակցող հոգեբանների կողմից տրամադրվում է հոգեբանական օգնություն: Ըստ Պաշտպանության նախարարության՝ զինծառայողներին հոգեբանական առաջին օգնությունը տրամադրվում է զորամասերում՝ սպա-հոգեբանների միջոցով, իսկ հետտրավմատիկ խանգարումների, սրացումների ու հոգեթերապևտիկ ստացիոնար բուժում ենթադրող այլ խնդիրների պարագայում՝ զինծառայողները տեղափոխվում են համապատասխան զինվորական հոսպիտալներ, քաղաքացիական բուժհաստատություններ և ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տան՝ անձնակազմի հետտրավմատիկ հոգեվերականգնողական հավաքական բաժանմունք: Նախարարությունը նաև հայտնել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 9-ից «Զառ» ուսումնական կենտրոնում, իսկ նոյեմբերի 10-ից՝ «Լեռնային Հայաստան հանգստյան տուն» պետական հիմնարկում գործում է Երևանի կայազորային հոսպիտալի հետտրավմատիկ հոգեվերականգնողական բաժանմունքը, որտեղ ստացիոնար պայմաններում զինծառայողներին հոգեբանական վերականգնողական օգնություն է տրամադրվում:

պաշտպանության միջոցներ, կամ տուժած զինծառայողները տեղափոխվում են ծառայության այլ վայր, սակայն նրանց հետ անհրաժեշտ է ամենօրյա ռեժիմով անցկացնել հոգեբանական աջակցման աշխատանքներ և պահել հատուկ ուշադրության ու հոգաժության ներքո:

ԵԱՀԿ մասնակից մի շարք պետություններում, օրինակ՝ Ռուսաստանում, Բելառուսում, Ուկրաինայում, Վրաստանում, Թուրքիայում, Ավստրիայում, Նորվեգիայում և Ֆրանսիայում սպայական անձնակազմին սովորեցնում են, թե ինչպես վարվել կարգապահական խախտումների դրսևորումների դեպքում, ինչպես հայտնաբերել և կանխել կարգուկանոնը խախտող երևույթները: Իռլանդիան նույնպես կարող է օրինակ ծառայել, քանի որ այնտեղ պաշտպանության ուժերում հավաքագրված բոլոր նորակոչիկները ուսուցում են ստանում այն մասին, թե ինչ է ոչ պատշաճ վարքագծի դրսևորումը, և որ ավելի կարևոր է՝ ինչպես կարելի է փորձել վերականգնել խախտված իրավունքը և գանգատ ներկայացնել որևէ մեկի դեմ, ով ոչ պատշաճ վարքագիծ է դրսևորում իրենց նկատմամբ: Այս կարգի դասավանդումը իրականացվում է ներաժական ուսուցման համար պատասխանատու ուսումնական զորամասի հրամանատարի կողմից, անկախ այն հանգամանքից՝ այդ դասավանդումը կատարվում է ընդհանուր բոլոր զինծառայողների, թե միայն ապագա սպաների համար: Դասախոսությունների շրջանակներում նաև ներկայացվում է սպաներին վերապահված դերը բողոքներին լուծում տալու հարցում<sup>18</sup>:

**Բանակում կարգապահության ապահովման հարցում իր կարևոր տեղ ունի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալը<sup>19</sup> (ԲՀԱ գծով տեղակալ):**

ԲՀԱ գծով տեղակալը, ի թիվս այլնի, պատասխանատու է անձնակազմի դաստիարակության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական

<sup>18</sup> Տե՛ս «Ձինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ձեռնարկ», էջ 229:

<sup>19</sup> Անձնակազմի հետ տարվող աշխատանքի գծով գնդի հրամանատարի տեղակալի հաստիքը վերանվանվել է և դարձել բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ: Չնայած դրան, Ներքին ծառայության կանոնագրքով անվանումը դեռևս չի փոխվել:

վիճակի, սոցիալ-իրավական, տեղեկատվական, հոգեբանական ապահովման համար<sup>20</sup>: Նրա հիմնական առաքելությունն է զինվորական կոլեկտիվում ինչպես պարտադիր ժամկետային, այնպես էլ պայմանագրային զինծառայողների շրջանում բարոյահոգեբանական բարձր որակների ձևավորումը, կոլեկտիվում փոխադարձ հարգանքի միջավայրի ապահովումը, տարբեր վարքային դրսևորումներ ունեցող զինծառայողների շրջանում կարգապահության սերմանումը: **«Բանակից տուն քաղաքացին վերադառնալու է ավելի կրթված ու կարգապահ»՝ սա պետք է լինի տվյալ աշխատանքներն իրականացնելիս հիմնական ուղենիշը:** Այսինքն, բարոյահոգեբանական ճիշտ ապահովումը պետք է լուծի հեռահար խնդիրներ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ զորամասեր այցերն ու զինվորների հետ առանձնազրույցները վեր են հանել նաև դրական քայլեր. ԲՀԱ գծող տեղակալներն, որպես կանոն, տարբերվում են իրենց ինտելեկտով, գիտակցում են իրենց դերի կարևորությունը, կարևորում են իրենց դերը, տիրապետում են զորամասում իրավիճակին: Բայց ձեռքբերված տվյալներն ու ուսումնասիրությունների արդյունքները նաև ցույց են տալիս, որ ԲՀԱ գծող տեղակալների մի մեծ մասը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներից ելնելով, կարողանում է արդյունավետ իրացնել միայն իր կարգավիճակից բխող լիազորությունների մի մասը: Այս առումով՝ ԲՀԱ գծող տեղակալների համար կազմակերպվող հատուկ և թիրախային վերապատրաստման դասընթացները պետք է լինեն առաջնահերթություն, որովհետև դրանք կարող են տալ դրական արդյունքներ:

Պաշտպանն արձանագրել է, որ 2017-2019 թվականներին Երևանի պետական համալսարանում ԲՀԱ գծով տեղակալների և սպա-հոգեբանների մասնակցությամբ անցկացվել են 5 վերապատրաստման դասընթացներ, որոնց ընդգրկվել է շուրջ 150 սպա: 2020 թվականին վերանայվել են ԲՀԱ գծով տեղակալների և սպա-հոգեբանների վերապատրաստմանն ուղղված ուսումնական ծրագրերը, այսուհետ դրանք իրականացվելու են Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ եռամսյա ժամկետով: Նախաձեռնված միջոցառումները ողջունելի

---

<sup>20</sup> Տե՛ս, Ներքին ծառայության կանոնագիրք, հոդվածներ 97 և 98:

են: Պաշտպանը նաև կարևորում է, որ այդ դասընթացներին հատուկ ուշադրություն պետք է դարձվի իրավունքի գերակայության և զինվորական կարգապահության հարաբերակցության գնահատմանն առնչվող թեմաների ուսումնասիրմանը նույնպես:

Հրամանատարի, և ընդհանրապես՝ սպայի վարքը կոլեկտիվում ձևավորում է բարոյական արժեհամակարգ և համարժեք մթնոլորտ: **Հրամանատարը արժեք է, որի հեղինակությունը պետք է մաքսիմալ անխոցելի պահել:** Իսկ դրա համար հրամանատարը, և ընդհանրապես սպան՝ պետք է լինի պրոֆեսիոնալ ու գրագետ: Նա պետք է լինի խստապահանջ, բայց նաև սրտացավ ու հոգատար իր ենթակայի նկատմամբ: Բարոյահոգեբանական ապահովման ելակետը հոգատարությունն է:

Դրա հետ մեկտեղ, համարժեք պետք է լինի նաև ենթակայի (ստորադասի) վերաբերմունքը իր հրամանատարի (սպայի) հանդեպ: **Զինվորը՝ իբրև սպայի ենթակա, պետք է հստակ գիտակցի, որ սպայի դերն անգնահատելի է. սպան է իրեն կրթում և ուղղորդում, «գնում զինվորի առջևից» և միաժամանակ «պահում նրա թիկունքը»:** Բացի դրանից, հոգատար սպան նաև նրա բարոյահոգեբանական վիճակի բարձրացման գործոններից է: Հրամանատարի նկատմամբ հարգանքի ցուցաբերումը, նրա պատիվն ու արժանապատվությունը հարգելը զինվորի ուղղակի պարտականությունն է: Զինվորները պետք է կարգուկանոնի և կարգապահության պահպանության հարցում օժանդակեն հրամանատարներին:

Փոխադարձ հարգանքի մթնոլորտում է, որ զինվորական կարգապահությունն ու կանոնադրական կարգը լինում է առավել ապահովված:

Բոլոր դեպքերում հարկ է նկատի ունենալ, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման ցանկացած մեխանիզմ ներդնելիս հիմքում պետք է ունենալ զինճառայողի արժանապատվության պաշտպանության և նրա իրավունքների խթանման բարձր ձգտումը:

**Սույն արտահերթ զեկույցում սպայական անձնակազմի հետ մեկտեղ որոշակիորեն անդրադարձ է արվել նաև սերժանտներին՝ որպես միջին օղակի կրտսեր հրամանատարների դերի կարևորմանը:**

Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական անձնակազմը<sup>21</sup>, լինելով կայուն կարգապահության երաշխիքն ապահովողներ, պետք է հանդես գան զորամասերում տեղի ունեցող իրավախախտումների պայքարի առաջին գծում: Նրանց ղեկավարումը կարևոր նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանք գեներացնելու գործում: Այս առումով, նրանք ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ) զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար ունի հիմնարար նշանակություն: Նրանք պետք է և կարող են ձեռնարկել բավարար ու անհրաժեշտ բոլոր միջոցները՝ իրենց ենթակաների (ստորադասների) հակաօրինական վարքագիծը կանխելու համար:

**Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ սերժանտների դերն առանձնակի նշանակություն ունի զինված ուժերում կարգապահության ամրապնդման հարցում, քանի որ հենց նրանք են շարքային կազմի զինծառայողների հետ առաջնային ու անմիջական շփում ունեցողները:** Հաճախ սերժանտն իր անձնական օրինակով է օգնում շարքայինին արագ ընկալել ներքին ծառայության նրբությունները: Որպես առաջնորդի ինքնատիպ կերպար՝ սերժանտը պետք է ենթակա անձնակազմի շրջանում քարոզի զինվորական կարգապահության պահանջների անշեղ կատարման նկատմամբ հարգանք, զինծառայողների մեջ զարգացնի և պահպանի անձնական արժանապատվության զգացում, զինվորական պարտքի ու պատվի գիտակցում: Սերժանտը պետք է իմանա ենթակա անձնակազմի բարոյահոգեբանական և անձնական հատկանիշները, ընտանեկան դրությունը և հոգ տանի նրանց մասին: Նա զինվորներից պետք է պահանջի զինվորական կարգապահության, օրվա կանոնակարգի պահպանում, վերադաս հրամանատարին պարբերաբար ներկայացնի կիրառված խրախուսանքների ու կարգապահական տույժերի մասին: Նշվածը բխում է Ներքին ծառայության կանոնագրքի պահանջների տրամաբանությունից<sup>22</sup>:

Այս առումով կարևոր է Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթի պրակտիկ կիրառության արդյունավետ ապահովումը: Այսպես, ըստ

<sup>21</sup> Ըստ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ կրտսեր ենթասպայական կազմը բաղկացած է «կրտսեր սերժանտ», «սերժանտ», «ավագ սերժանտ», «ավագ» զինվորական կոչումներից:

<sup>22</sup> Տե՛ս, օրինակ, Կարգապահական կանոնագրքի 140.3 և 151 հոդվածները:

այդ դրույթի՝ տրված կարգապահական տույժերը, ինչպես նաև թույլ տրված կարգապահական խախտումներն իրավասու հրամանատարի (պետի) որոշմամբ կարող են քննարկվել համապատասխանաբար շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **անձնակազմի և սերժանտական ժողովներում**, ավագ ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **ենթասպայական ժողովներում**, սպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **սպայական ժողովներում կամ սպայի պատվի դատարաններում**: Նշված ժողովների և սպայի պատվի դատարանների կազմակերպման ու դրանցում հարցերի քննարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով: Պաշտպանության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 947-Ն հրամանի համաձայն՝ ՀՀ զինված ուժերի անձնակազմի, սերժանտական, ենթասպայական, սպայական ժողովները Կարգապահական կանոնագրքի հիման վրա ստեղծված և հասարակական հիմունքներով մշտապես գործող մարմիններ են, որոնք կոչված են **նպաստելու զինվորական կարգապահության ամրապնդմանն ու զինվորական կոլեկտիվի համախմբմանը**:

Մինչդեռ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զորքերում ենթասպայական և սերժանտական ժողովները հիմնականում չունեն անհրաժեշտ ազդեցություն: Ավելին՝ առանձին դեպքերում դրանք ձևական բնույթի են, ինչը, անշուշտ, խնդրահարույց է: **Սերժանտների՝ որպես շարքային և սպայական անձնակազմի արանքում կապող օղակի ամրապնդումը, նրանց կարգավիճակի բարձրացումը, առկա մեխանիզմների արդյունավետ իրագործումը միանշանակ, կարող է լինել բանակում կարգուկանոնի երաշխավորմանն ուղղված ևս մեկ լրացուցիչ դրական քայլ**<sup>23</sup>:

---

<sup>23</sup> Ուշադրության է արժանի նաև Պաշտպանության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 947-Ն հրամանը, ըստ որի՝ «Սպայի պատվի դատարանների կազմակերպման և դրանցում հարցերի քննարկման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ սպայի պատվի դատարանը Կարգապահական կանոնագրքի հիման վրա ստեղծված և հասարակական հիմունքներով գործող ընտրովի մարմին է, որը կոչված է նպաստելու սպայի կողմից ՀՀ Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի պահանջների, ինչպես նաև հրամանատարների հրամանների ու սպայի պատվի կանոնների խստիվ և ճշգրիտ կատարմանը, սպայի կողմից կատարված կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ դիրքորոշման ձևավորմանը: Հարցեր կարող են առաջանալ նաև պատվի դատարանների գործունեության արդյունավետության առումով, քանի որ զորամասերում

Վերոգրյալի հաշվառմամբ՝ կարելի է արձանագրել, որ զորքերում կարգապահության ապահովմանն ու երաշխավորմանը միտված բոլոր մեխանիզմների լիարժեք գործունեությունը կարևոր է ինչպես զինձառայողների՝ որպես համազգեստով քաղաքացիների իրավունքների պաշտպանության, այնպես էլ բանակի մարտական ոգին բարձր պահելու տեսանկյունից:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Զինված ուժերում կարգապահական քաղաքականությունը պետք է լինի մշտապես կատարելագործվող և հետապնդի կարգավորիչ (կրթող) և կանխարգելիչ (զսպող) նպատակ. մի կողմից նպաստել զինծառայողի կողմից իր պարտականությունների անշեղ կատարմանը, հարգել զորամասում սահմանված կանոնները, մյուս կողմից՝ ազդակ հանդիսանալ բոլոր զինծառայողների համար, որ ցանկացած թերացում (խախտում) արժանանում է համարժեք արձագանքի: Աքսեռմատիկ է, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման հարցում առանցքային է իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, կանխարգելման նպատակով կոնկրետ գործողությունների ծրագրի մշակումը:

**Բանակում կարգապահության անընդհատ ամրապնդման և իրավախախտումների կանխարգելման համար անհրաժեշտ պայման է զինծառայողի մեջ Սահմանադրության և օրենքի նկատմամբ հարգանքի, իրավունքի գերակայության արժեքի գնահատման, դրանով հավասարապես պաշտպանված և կաշկանդված լինելու, սեփական իրավունքների նկատմամբ հարգանք պահանջելու և միևնույն ժամանակ այլ անձանց իրավունքների նկատմամբ անվերապահ հարգանք դրսևորելու հատկանիշների ձևավորումը:**

Օրենքի առջև հավասարության, խտրականության արգելման վերաբերյալ սահմանադրական ու օրենսդրական ըմբռնումը համահունչ է միջազգային իրավական չափանիշներին, որոնք արտացոլվել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդվածներ 2, 7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվածներ 2, 26), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում (հոդված 14) և բազմաթիվ այլ փաստաթղթերում: ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը սահմանում է, որ բոլոր զինծառայողները, անկախ զինվորական կոչումից ու պաշտոնից, հավասար են օրենքի առջև և կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար

սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները (հոդված 23):

Զինձառայողների շրջանում իրավախախտում ծնող պատճառների և պայմանների վերհանումն ու կանխարգելումն իրենից ենթադրում է միմյանց հետ փոխկապակցված և հաջորդական գործողություններ, որոնք ուղղված են բանակում բարձր մակարդակի կարգուկանոնի պահպանմանն ու ապահովմանը: **Կարգապահական քաղաքականության ոլորտում պետք է բացառել զինձառայողների շրջանում օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ չհետապնդող անհավասար վերաբերմունքի ցանկացած դրսևորում:** Անհավասար վերաբերմունքի առկայության պայմաններում զինձառայողները չեն կարող ընկալել զինվորական կարգուկանոնի պահպանման անհրաժեշտությունը և կարևորությունը՝ հակվելով խնդիրների լուծման իրավակարգը խախտող եղանակների (օրինակ՝ դրսից միջամտություն է իրականացվում բանակում զինձառայողների միջև հարաբերությունների կարգավորման համար և այլն):

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքները, ստացված ահազանգերը ցույց են տալիս, որ կարգապահական խախտումների զգալի մասը պայմանավորվում է մինչև զինված ուժեր ներգրավելն անձի մոտ արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորմամբ: **Իրավախախտումների կանխարգելման տեսանկյունից անհրաժեշտ է կատարել անձի վարքի ռիսկերի գնահատում և բացահայտված խնդիրների հիման վրա պլանավորել և իրականացնել անհատական աշխատանքներ:** Դա կարող է իրականացվել երկու փուլով: Առաջին փուլում դպրոցը և ոստիկանությունն անձի վերաբերյալ տվյալները (բնավորություն, վարքագիծ, հակվածություն, սոցիալական և հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիքների աստիճան և այլն) փոխանցում են զորակոչային և զորահավաքային համալրման ձառայության տարածքային ստորաբաժանում (զինկոմիսարիատ): Երկրորդ փուլում՝ զորակոչվելուց հետո, հավաքագրված այդ տվյալները փոխանցվում են զորամաս, որտեղ արդեն սպայական անձնակազմը հնարավորություն կունենա վերլուծել անձի վերաբերյալ տվյալները և նրա հետ տանել թիրախային աշխատանքներ՝ նրա հնարավոր հակաիրավական վարքագիծը

կանխելու նպատակով<sup>24</sup>: Այս հարցը քննարկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստում:

Հատկանշական է, որ տվյալ հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը վկայակոչել է «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշումը և նշել, որ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները հայտարարված զորակոչի նախապատրաստական փուլում իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից պահանջում են զորակոչիկների վերաբերյալ տվյալներ: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զորակոչվող քաղաքացիների վարքագծի, բնավորության, հակվածության, սոցիալական և հոգեբանական այլ գործոնների վերաբերյալ ուսումնական հաստատություններից և այլ պետական մարմիններից ու կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը լրացվում է զորակոչիկի «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկում» և այդ կարգով փոխանցվում զորամաս:

Չնայած հարցի կարգավորմանը միտված առկա է որոշակի իրավական հենք՝ այնուամենայնիվ, պրակտիկ կիրառման տեսանկյունից այն գրեթե անարդյունավետ է: Մարդու իրավունքների պաշտպանի կատարած ուսումնասիրությունները, այդ թվում՝ սույն զեկույցի մշակման ընթացքում զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների իրավասու ներկայացուցիչներից ստացված տեղեկությունները վկայում են, որ դպրոցները, որպես ձևավորված կանոն, զորակոչի ենթակա քաղաքացիների վերաբերյալ տրամադրում են նախապես մշակված տիպային ձևի դրական բնութագրեր: Դպրոցները հազվադեպ են տրամադրում զորակոչիկների գիտելիքների, վարքի և անձի այլ բնութագրերի վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկատվություն (դպրոցի կողմից անձի վարքի վերաբերյալ բացասական բնութագրեր գրեթե չեն

---

<sup>24</sup> Այս մեթոդը կարող է օգնել զորամասի հրամանատարությանը և Ռազմական ուստիկանությանը, օրինակ, կրիմինոգեն կամ քրեածին երևույթների, ներառյալ՝ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետ միջոցներ գտնելու կամ անձին նրա գիտելիքներին համապատասխան ծառայության ներգրավելու հարցերում:

ներկայացվում): Արդյունքում, ստացվում է, որ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներից անձի զորակոչվելուց հետո զորամաս փոխանցվող տեղեկատվությունը սպայական անձնակազմին հնարավորություն չի տալիս զինծառայողի հետ տանել թիրախային աշխատանքներ և կանխել նրա հակաիրավական վարքագիծը, այլ կերպ ասած՝ զորակոչված քաղաքացին սպայական անձնակազմի համար անկանխատեսելի է: Թերի տեղեկատվությունը զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի բարձր մակարդակի պահպանման ռիսկեր է պարունակում և բանակում կարգուկանոնի հաստատման մարտահրավեր է:

Պետք է նկատի ունենալ, որ զորամասում զինծառայողի հետ աշխատանքներ իրականացնելիս դպրոցի տրամադրած տեղեկատվությունն ունի հիմնարար նշանակություն: Հետևաբար, դպրոցի տնօրենը զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելիս պետք է ցուցաբերի բարձր պատասխանատու մոտեցում և տրամադրի օբյեկտիվ ու ամբողջական տեղեկություններ:

Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների իրավասու ներկայացուցիչները նաև հայտնել են, որ Ոստիկանությունից ստանում են միայն իրավախախտում կատարած և Ոստիկանությունում հաշվառված քաղաքացիների վերաբերյալ տվյալներ, իսկ եթե քաղաքացին հաշվառված չէ Ոստիկանությունում, նրա վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացվում:

Ինչպես նշվեց, իրավասու մարմիններից փոխանցվող տեղեկատվությունը ամփոփվում է «Հայրենիքի պաշտպանի անհատական գրքույկում» և փոխանցվում զորամաս: Ուշագրավ, որ այդ գրքույկում ընդգրկվում է նաև զորակոչիկի վերաբերյալ նրա ընտանիքի անդամի (սովորաբար, հոր կամ մոր) ներկայացրած բնութագիրը:

Վերը շարադրվածի հաշվառմամբ՝ մտահոգիչ է ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշման պահանջներին ձևական մոտեցում ցուցաբերելը, առավել ևս, որ նշված որոշման նպատակներից է նաև հենց

զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի պահպանմանն աջակցելը: Հետևաբար, իրավասու պետական մարմինները խիստ վերահսկողական գործառույթներ իրականացնելուց զատ, հարցին պետք է ցուցաբերեն ավելի բազմակողմանի ու ճկուն մոտեցում՝ նպատակ ունենալով զորամասին տրամադրել զորակոչիկի վերաբերյալ ամբողջական ու օբյեկտիվ տեղեկություններ: Անշուշտ, այստեղ կարևոր է նաև այդ գրքույկի որակի բարձրացումը նույնպես: Դրանում հարցադրումները պետք է լինեն թիրախային և այնպիսին, որ հնարավոր լինի վեր հանել զինծառայողի մասին իրական պատկերը:

**Իրավախախտում ծնող պատճառների և պայմանների վերհանման ու կանխարգելման համար կարևոր է զորամաս մուտք գործելու առաջին իսկ օրից զինծառայողի մոտ իր պարտականությունների և զինվորական կանոնագրքերի պահանջների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցման ձևավորումը, զորամասում ներքին կարգուկանոնը, համակեցության կանոնները, միմյանց պատիվն ու արժանապատվությունը, ինչպես նաև զինվորական կանոնագրքերով սահմանված փոխհարաբերությունները հարգելու ու պահպանելու ոգով դաստիարակելը: Այսինքն, զինծառայողի մոտ իրավական մշակույթի արմատավորումը:** Զորամասում գտնվելն իր արտացոլումն է գտնում զինծառայողի (հատկապես պարտադիր ժամկետային զինծառայողի) հոգեբանության վրա: Արդեն իսկ զորակոչի օրը, ներկայանալով զինկոմիսարիատ, քաղաքացին ստիպված է լինում հրաժեշտ տալ իր նախկին կարգավիճակին և հոգեբանորեն ընդունել այն միտքը, որ ինքն այլևս «համազգեստով քաղաքացի» է, ինչը մի կողմից նշանակում է մյուս քաղաքացիների հետ հավասարություն, մյուս կողմից՝ որ նրա օրվա ռեժիմը խիստ կանոնակարգված է: Քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրի անցման փուլում հաճախ խնդիրներ են առաջանում հարմարվողականության, կյանքի նոր պայմաններին, նոր միջավայրին ընտելանալու հարցերում: Ուստի, հրամանատարական կազմի համար առաջնային խնդիրներից է զինծառայողի հարմարեցման գործընթացի ճիշտ կազմակերպումը: Հարմարեցման վրա ազդող օբյեկտիվ գործոններից են զորամասում տիրող բարոյա-հոգեբանական մթնոլորտը, կանոնակարգը, ծառայակիցների, սպայական կազմի վերաբերմունքը և այլն:

Որպեսզի, հարմարեցումն արդյունավետ անցնի, գորամասի սպայական կազմը, ուլքեր ղեկավարում են այդ գործընթացը, պետք է քաջատեղյակ լինեն այն օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներին, որոնք նպաստում կամ խանգարում են դրան: Հարմարեցման գործընթացի արդյունավետ, ճիշտ կազմակերպումը հնարավորություն է ստեղծում անձի հնարավորին սեղմ ժամկետում զինված ուժեր ներգրավմանը: Ավելին՝ դա հետագայում նպաստում է նաև գորամասում կարգապահության պահպանմանը, ինչպես նաև զինծառայողների կողմից իրավախախտումներ կատարելուց ձեռնպահ մնալուն:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ հատկապես պարտադիր ժամկետային զինծառայողները բանակ մուտք գործելուց հետո հարմարվողականության առումով խնդիրների են բախվում:

Կարգապահական խախտումների պատճառների շարքում տեղ է զբաղեցնում նաև սոցիալական առանձնահատուկ բնութագրումներով զինծառայողների կարիքների անտեսումը կամ նրանց նկատմամբ պատշաճ ուշադրության բացակայությունը: Այս հանգամանքը հանգեցնում է թե՛ զինծառայողների միջանձնային հարաբերություններում խնդիրների ծագման և թե՛ հենց իրենց՝ զինծառայողների կողմից հակաօրինական վարքագծի դրսևորման: Բանն այն է, որ զինծառայողների ադապտացիոն գործընթացը կազմակերպելու գործառույթների իրականացումն ապահովելու պատասխանատու սպաների (սպա-հոգեբան, սպա-իրավաբան, հրամանատարի ԲՀԱ գծով տեղակա) ինստիտուտում առկա են որոշակի խնդիրներ, որոնց առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն զեկույցի նախորդ գլխում:

**Իրավախախտումների կանխարգելման հարցում կարևոր է թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակաիրավական վարքագիծը բացառելու նպատակով նրանց հետ տանել կոնկրետ աշխատանքներ<sup>25</sup>:**

---

<sup>25</sup> Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ թիրախային խմբերում ընդգրկված զինծառայողների հետ ՀՀ պաշտպանության նախարարի 2014 թվականի մարտի 20-ի թիվ 271-Ն հրամանով սահմանված ընթացակարգով իրականացվում են նպատակամետ կանխարգելիչ բնույթի իրավադաստիարակչական աշխատանքներ:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը, զորամասեր այցերը վկայում են, որ թիրախային խմբերի հետ աշխատանքները ոչ բոլոր զորամասերում են իրականացվում արդյունավետ:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զինված ուժերում իրավախախտում ծնող պատճառների ու պայմանների կանխարգելման գործում առանցքային է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում գործող Ռազմական ոստիկանության դերը, որը գործում է «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված խնդրի կատարման համար: Այսպես, նշված օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ռազմական ոստիկանությունն աջակցում է զինված ուժերում օրինականության և կարգապահության ամրապնդմանը, զորամասերում ու զինվորական կառավարման մարմիններում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրմանը և իրավագիտակցության բարձրացմանը: Դրա հետ մեկտեղ, ՀՀ ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքի 73-րդ հոդվածը սահմանում է, որ զորամասի հրամանատարը, ի թիվս այլնի, պատասխանատու է զորամասի զինվորական կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի և զինվորական ծառայության անվտանգության համար:

**Այս առումով կարևոր է զորամասի հրամանատարության և Ռազմական ոստիկանության ծառայողների միջև իրավախախտումների կանխարգելման համար համատեղ աշխատանքների շարունակական կատարելագործումը: Դա ձեռնտու է երկուսին էլ:**

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զորամասի հրամանատարության և Ռազմական ոստիկանության ծառայողների կողմից տեղեկությունների փոխանակմամբ կատարվում է քրեական ենթամշակույթով հետաքրքրվող և սոցիալական տարաբնույթ խնդիրներ ունեցող պարտադիր ժամկետային զինծառայողների հաշվառում: Նշված զինծառայողների հետ զորամասի հրամանատարության և Ռազմական ոստիկանության ծառայողների կողմից պարբերաբար անցկացվում են անհատական դաստիարակչական աշխատանքներ, իրականացվում է վարքի մշտադիտարկում, կազմակերպում են կանխարգելիչ միջոցառումներ: Ռազմական ոստիկանության ծառայողները

զորամասերի սպայական անձնակազմի հետ համատեղ զորամասերում կարգապահության պահպանման ու ամրապնդման ուղղությամբ պարբերաբար կազմակերպում են իրավական թեմաներով դասընթացներ:

Բնականաբար, ողջունելի է զորամասերի և Ռազմական ոստիկանության համագործակցությունը: Մինչդեռ, այս համագործակցությունը կախված է զորամասի հրամանատարության և Ռազմական ոստիկանության ծառայողների պատրաստակամությունից, ինչը նշանակում է, որ դրա արդյունավետությունը պայմանավորված է անձանց մոտեցումներով: Փոխարենը՝ այն պետք է դրված լինի ինստիտուցիոնալ հենքի վրա, որպեսզի բացառվի տարբեր զորամասերում տարբեր մակարդակի համագործակցությունը: «Ընդհանուր շահը»՝ իրավախախտում ծնող պատճառների և պայմանների վերհանումն ու կանխարգելումը, կարգապահության վրա բացասաբար ազդող երևույթներն ու գործոնները բացառելը պետք է խթան հանդիսանան առավել շահագրգիռ, օպերատիվ ու ինտենսիվ գործելակերպի:

Զինվորական կարգապահության վրա դրական ազդեցության, իրավախախտումների կանխարգելման գործում մեծ կարող է լինել նաև մեկ այլ նախաձեռնություն: Մեր Հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում մեծ ավանդ ունեցող, ներառյալ՝ բացառիկ արիություն և անձնուրացություն ցուցաբերած զինվորականներն ու նրանց գործը նույնպես կարող է լինել օրինակելի, կրթող (կարգավորիչ) և զսպող (կանխարգելիչ), ուստի՝ դրանց լայնորեն լուսաբանելը կարևոր է թվում: Դա կարող է լինել ոչ միայն կարգուկանոնի ամրապնդման, զինվորական կոլեկտիվի համախմբման, զինծառայողների դաստիարակության լավագույն միջոցներից, այլև լրացուցիչ խթան՝ բարձրացնելու բանակի մարտունակությունը և մեծացնելու հարգանքը միմյանց նկատմամբ:

#### *Ծառայության պատշաճ պայմաններ*

2020 թվականն առաջ բերեց գլոբալ մարտահրավեր՝ նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակ: Այն զգալի էր նաև Հայաստանի համար: Դրան գումարվել է նաև 2020 թվականի հուլիսին և սեպտեմբեր-նոյեմբերին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունները, որոնք միասին լրջագույն

մարտահրավեր դարձան մեր երկրի, այդ թվում՝ զինված ուժերի համար: 44-օրյա մարտական գործողությունների հետևանքով լրջագույն մարտահրավերներ են առաջացել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ժամանակի հրամայականն է դարձել հնարավորին սեղմ ժամկետում բարձրացնել զորքերում կարգապահության մակարդակը, վեր հանել կարգապահությանը վնասող գործոնները, կանխարգելել իրավախախտում ծնող պատճառներն ու պայմանները, ինչն իր հերթին կնպաստի մարդու իրավունքների պաշտպանությանը, որոշ խնդիրների լուծմանը:

**Բարձր մակարդակի կարգապահության պահպանման համար նախևառաջ անհրաժեշտ են ծառայողական բավարար պայմաններ:** Ակտիվ մարտական գործողություններից հետո Մարդու իրավունքների պաշտպանը զինծառայողներից ու նրանց ընտանիքների անդամներից բազմաթիվ բողոքներ է ստացել զինծառայողների հետպատերազմյան ծառայողական պայմանների վերաբերյալ (սոցիալ-կենցաղային վատթար պայմաններ, հոգեբանական աջակցության ու բժշկական օգնության հարցեր և այլն): Նշված հարցերով հրապարակումներ են եղել նաև զանգվածային լրատվության միջոցներով: Մարդու իրավունքների պաշտպանը մի շարք այցեր է իրականացրել նոր զբաղեցվող բնագծերում տեղակայված մարտական դիրքեր, տեղում ծանոթացել զինծառայողների ծառայողական պայմաններին: Արձանագրված խնդիրների կապակցությամբ կոնկրետ հարցադրումներով ու առաջարկներով գրություններ են հասցեագրվել իրավասու գերատեսչություններ, առաջարկվել է հրատապ միջոցներ ձեռնարկել զինծառայողների հետպատերազմյան ծառայողական պայմաններին վերաբերող խնդիրներին արագ լուծում տալու ուղղությամբ: Արդյունքում, զինվորների ծառայողական պայմաններում դրական տեղաշարժեր են արձանագրվել, մի շարք հարցեր լուծում են ստացել: Դրա հետ մեկտեղ, որոշ խնդիրներ դեռևս շարունակում են մնալ չլուծված:

#### *Մահվան և ինքնավնասման դեպքեր*

Իրավակարգը խախտող երևույթների դեմ պայքարը, անկասկած, չընդհատվող ու շարունակական աշխատանք է պահանջում: Այս հարցում, խնդրահարույց ու

մտահոգիչ է բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը: Հաճախ ինքնավնասման դեպքերի պատճառների մեջ էական դեր են խաղում զորամասում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, զինծառայողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքների ցածր մակարդակը, ինչպես նաև զինծառայողների նկատմամբ անհատական մոտեցման բացակայությունը: **Պետք է նկատի ունենալ, որ պետության անվերապահ պարտականությունն է խաղաղ պայմաններում պաշտպանել իր հսկողության ներքո գտնվող զինծառայողների կյանքը: Կյանքի իրավունքը՝ որպես բնական, հիմնարար և անօտարելի արժեք, ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ինչպես կալանավորված անձինք, պարտադիր ժամկետային զինծառայողները նույնպես գտնվում են անմիջականորեն «պետության ձեռքերում», և բանակի հետ կապված ցանկացած իրադարձություն ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընկնում է իշխանությունների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար, պետությունը պարտավոր է նաև պատասխանատվություն կրել բանակում տեղի ունեցած ցանկացած վնասվածքի կամ մահվան դեպքի համար: Բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմիններն օբյեկտիվ պատճառներով գործի ճշգրիտ հանգամանքները չեն կարող պարզել, պետք է բավարար և համոզիչ կերպով բացատրեն իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնեն դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ<sup>26</sup>:

Իսկզբանե, կարևոր է ընդգծել, որ թեև ադրբեջանական ազրեսիայի հետևանքով սանձազերծված մարտական գործողությունները լրջագույն մարտահրավեր էին հատկապես զինծառայողների կյանքի իրավունքի ապահովման տեսանկյունից, այնուամենայնիվ, սույն գլխում, Պաշտպանության նախարարության ներկայացրած տվյալների հիման վրա, ուսումնասիրվել է 2018-2020 թվականների ընթացքում միայն խաղաղ պայմաններում զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում զինված

<sup>26</sup> Տե՛ս, Մարինա Ալեքսեյևան ընդդեմ Ռուսաստանի (Marina Alekseyeva v. Russia) 2014 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 22490/05, 121 և 122 կետեր:

ուժերում արձանագրված ինքնավնասման դեպքերը: Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների՝ մահացության վիճակագրությունը հետևյալն է. 2018թ.՝ 63, 2019թ.՝ 49, 2020թ.՝ 54: Ինքնավնասումների մասով ստացվել են հետևյալ տեղեկությունները. 2018թ.՝ 57, 2019թ.՝ 97, 2020թ.՝ 65<sup>27</sup>:

**Անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը հստակ և տեսանելի քայլեր ձեռնարկի բանակում մահվան և ինքնավնասման պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, դրանց համակարգային լուծումներ տալու և արդյունքում՝ դրանք բացառելու ուղղությամբ:**

Մարդու իրավունքների պաշտպանը զինծառայողների մահվան կամ ինքնավնասումների կապակցությամբ մշտապես կոնկրետ հարցադրումներով պաշտոնական պարզաբանումներ է պահանջում իրավասու պետական մարմիններից: Միաժամանակ, Պաշտպանը պահանջում է ներկայացնել պարզաբանումներ այն մասին, թե իրավասու մարմիններն ինչ գործուն քայլեր են ձեռնարկում զինծառայողների մահվան և ինքնավնասումների դեպքերի կանխարգելման ուղղությամբ:

Այսպես, ըստ Պաշտպանության նախարարությունը տեղեկությունների.

1) երիտասարդ համալրում ընդունող ստորաբաժանումների սպաների և սերժանտների հետ անցկացվում են մեթոդագործնական պարապմունքներ, որոնց ժամանակ նրանք ծանոթանում են ինքնասպանությունից և ինքնավնասումից առաջ զինծառայողների նախնական վիճակների հիմնական դրսևորումներին,

2) նորակոչիկների, այլ զորամասերից տեղափոխված զինծառայողների հարմարվելու շրջանում հոգեբանական վիճակը կայունացնելու նպատակով, ինչպես նաև նյարդահոգեկան անհավասարակշռություն, հոգեհուզական անկայունություն դրսևորող, ընկճված վիճակում գտնվող զինծառայողների հետ պարբերաբար կատարվում են անհատական, բացատրական, իրավադաստիարակչական աշխատանքներ,

---

<sup>27</sup> Զեկույցում վիճակագրությունները ներկայացված են 2020 թվականի դրությամբ, 2021 թվականի տվյալներն ուսումնասիրության փուլում են:

3) անմիջական հրամանատարության, Ռազմական ոստիկանության ծառայողների կողմից պարբերաբար համատեղ անցկացվում են անհատական և կոլեկտիվ զրույցներ ինքնավնասումների, ինքնասպանությունների հանրային վտանգավորության և առաջացող բացասական հետևանքների վերաբերյալ, այդ թվում նաև իրավական,

4) ինքնավնասման երևույթների կանխման նպատակով ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացվում են առաջարկություններ՝ զինծառայողներին համապատասխան ստորաբաժանումներում և պաշտոններում նշանակելու վերաբերյալ,

5) նախքան մարտական հերթապահության և զենքով պահակային ծառայության ընդգրկվելն ուսումնասիրվում են զինծառայողների անհատական-հոգեբանական, սոցիալական առանձնահատկությունները,

6) տեղի ունեցած ինքնավնասումների դեպքերը վերլուծվում են, կրկնությունը բացառելու և կանխարգելելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին տրվում են հանձնարարականներ:

Այս ուղղությամբ, ըստ ստացված տեղեկությունների, կարևոր աշխատանք է կատարել ՀՀ զինվորական դատախազությունը: Մասնավորապես, նշվել է, որ կատարված ուսումնասիրությունների հիման վրա կայազորների զինվորական դատախազներին, ի թիվս այլնի, առաջարկվել է՝

1) յուրաքանչյուր գործով քննության ընթացքում, կախված առկա ելակետային տվյալներից, իսկզբանե առաջ քաշել զինծառայողին մահ պատճառելու հանգամանքների, հանցավորի մեղքի ձևի վերաբերյալ տարբեր վարկածներ, և դրանք հերքված համարել միայն համապատասխան ապացույցների բավարար համակցության գնահատման արդյունքում.

2) յուրաքանչյուր գործով մանրակրկիտ ստուգման ենթարկել մեղադրյալների կողմից բերվող պատճառաբանությունները՝ հանցավոր արարքների պատճառների վերաբերյալ, հասնել հանցագործությունների կատարման իրական պատճառների վերհանմանը, դրանց կանխարգելմանը և չեզոքացմանը.

3) հանձնարարել յուրաքանչյուր գործով պարզել և վեր հանել կատարված հանցագործությանը նպաստող պայմանները և դրանց հետ կապված հնարավոր այլ հանցագործությունները.

4) ըստ առանձին զորամասերի՝ վերլուծել հանցավորության աճի կամ նվազման պատճառներն ու նպաստող պայմանները՝ նախանշելով դատախազական ներգործության արդյունքում դրանց վերացման ուղիներն ու միջոցները.

5) կայազորների զինվորական դատախազությունների, քննչական բաժինների և ռազմական ոստիկանության աշխատակիցների, ինչպես նաև զորամասերի հրամանատարության հետ համատեղ ուսումնասիրել դեպքերի ու հանցագործությունների պատճառները և միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ, այն է՝ կատարել զինծառայողների իրավական գիտելիքների մակարդակը բարձրացնելուն ուղղված դաստիարակչական և բացատրական աշխատանքներ.

6) ձեռնարկել միջոցառումներ և հասնել նրան, որ զորամասերի հրամանատարությունը լրիվ ծավալով շարունակի օժանդակել հետաքննության և նախաքննության մարմիններին՝ ցանկացած դեպքի իրական հանգամանքները բացահայտելու ուղղությամբ, բացառի նշված մարմիններին այդ հարցում խոչընդոտելու և դեպքերն այլ կերպ ներկայացնելու փաստերը, քանզի յուրաքանչյուր դեպքին արագ արձագանքելը և դրան համապատասխան ընթացք տալը կանխարգելիչ ազդեցություն կունենա հետագայում հանցագործության առաջացման, կամ տեղի ունեցածն ավելի ծանր հանցագործության վերաճելը թույլ չտալու առումով:

**Պաշտպանի գնահատմամբ՝ վերը նշվածն անհրաժեշտ, բայց դեռևս բավարար քայլեր չեն բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխելու համար:**

Այս առումով, հրատապ է թվում բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն) մշակելը, որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծման:

Հատկանշական է, որ Զինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինճառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Ավելին՝ զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը: Կարևոր է ընդգծել, որ միջազգային իրավաբանության ներքո քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները՝ 1) անկախություն (independence), 2) պատշաճություն (adequacy), 3) անհապաղ և ողջամիտ ժամկետ (promptness and reasonable expedition) և 4) հանրային վերահսկողություն, ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin): Այս ամենից բացի՝ գործի քննությունը պետք է լինի նաև մանրակրկիտ (thorough)<sup>28</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ինչպես կալանավորված անձինք, պարտադիր ժամկետային զինճառայողները նույնպես գտնվում են անմիջականորեն «պետության ձեռքերում», և բանակի հետ կապված ցանկացած իրադարձություն ամբողջությամբ կամ մեծ մասամբ ընկնում է իշխանությունների բացառիկ իրավասության ներքո: Հետևաբար, պետությունը պարտավոր է նաև պատասխանատվություն կրել բանակում տեղի ունեցած ցանկացած վնասվածքի կամ մահվան դեպքի համար<sup>29</sup>:

### Բռնության դեպքեր

Պաշտպանը շարունակում է ստանալ զինճառայողների նկատմամբ ենթադրյալ բռնություն և ոչ պատշաճ կամ վատ վերաբերմունքի դրսևորման մասին բողոքներ: Սա մտահոգիչ է այն առումով, որ բռնության դեպքերը բանակում կարգուկանոնի հաստատման մարտահրավեր են: Ցանկացած նման դրսևորում անընդունելի է:

<sup>28</sup> Առավել մանրամաս տես Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդումը, էջ 550:

<sup>29</sup> Տե՛ս Բեքերն ընդդեմ Թուրքիայի (Beker v. Turkey) 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

Բռնության յուրաքանչյուր դեպքի հանդեպ զրո հանդուրժողականությունն առաջնահերթ է: Ի տարբերություն մարդու շատ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Միջազգային իրավաբանությունը պահանջում է, որ այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Այս սկզբունքային մոտեցումը պայմանավորված է նրանով, որ բռնությունների և ոչ պատշաճ վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդու կարևորագույն արժեքներից է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Այն չի կարող արդարացվել և հիմնավորվել նույնիսկ պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքն արգելվում է՝ անկախ անձի վարքագծից: Այս չարիքի դեմ հարկավոր է պայքարել կոշտ միջոցներով և օրենքին համապատասխան: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորումները պետք է տեղ չունենան մեր բանակում: Նման արարքների նկատմամբ չպետք է ցուցաբերվի որևէ հանդուրժողականություն (նույնիսկ չնչին):

**Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխել զինված ուժերում բռնության և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու դեպքերը, իսկ այդպիսիք լինելու դեպքերում՝ իրականացնել արդյունավետ հետաքննություն, հայտնաբերել մեղավորներին և պատժել: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է լինեն արդյունավետ և ծառայեն իրենց նպատակին: Ավելին, դրանք պետք է համակողմանի ուսումնասիրվեն, վեր հանվեն իրավախախտում ծնող պատճառներն ու պայմանները և ներդրվեն կանխարգելիչ գործուն մեխանիզմներ:**

«Վարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է նաև 2018 թվականից մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի ընթացքում զինված ուժերում կանոնադրային փոխհարաբերությունների պահպանման վիճակը: Մասնավորապես, Զինծառայողների

փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման դեպքերի վիճակագրությունը հետևյալն է. 2018թ.` 169, 2019թ.` 208, 2020թ.` 317:

**Բոլորի համար պետք է պարզ լինի, որ բանակում ոչ կանոնադրային փոխհարաբերությունները լուրջ խնդիր են ինչպես զինծառայողների իրավունքների պաշտպանության, այնպես էլ զինուժի մարտունակության ապահովման:** Ուստի, կանոնադրային փոխհարաբերությունների խախտման ցանկացած դեպքի նկատմամբ պետք է դրսևորել խիստ անհանդուրժողականություն, իրավախախտում կատարած ամեն մի զինծառայող պետք է ենթարկվի օրենքով սահմանված պատասխանատվության: Սա կարևոր է թե նման դեպքերի կանխարգելման, և թե բանակում կայուն ու երաշխավորված կարգապահության ամրապնդման տեսանկյունից: Միայն զինվորական բարեկրթության, միմյանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու, զինվորական կոլեկտիվում միմյանց հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորելու և իրավունքի գերակայության երաշխավորման միջոցով է հնարավոր ապահովել բարձր մակարդակի կարգապահություն:

Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զինված ուժերում կանոնադրային հարաբերությունների պահպանման ուղղությամբ տարվում են կոնկրետ աշխատանքներ: Այսպես, ըստ նախարարության՝ 2019 թվականի ընթացքում անցկացվել է «Զինծառայողների միջև ոչ կանոնադրային փոխհարաբերություններին նպաստող պայմանները և դրանց կանխարգելման ուղիները» թեմայով կոնֆերանս, որտեղ քննարկվել և նախանշվել են անհրաժեշտ քայլերը՝ դրանց թիվը նվազագույնի հասցնելու համար: Հրամանատարների կողմից կոնկրետ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով արձակվել են ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի հրամաններ: Ռազմական ոստիկանության ծառայողները նույնպես, ամենօրյա ռեժիմով զինծառայողների շրջանում իրականացնում են կանխարգելիչ աշխատանքներ: Նախարարության տեղեկացմամբ՝ իրականացված աշխատանքների արդյունքում 2019 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2020 թվականի նույն ժամանակահատվածում շուրջ 3%-ով նվազել են նշված դեպքերի քանակը:

**Ի հարկե, ողջունելի է Պաշտպանության նախարարության իրականացրած աշխատանքները, սակայն, կարծում ենք, առաջին պլան պետք է բերել կանխարգելիչ միջոցառումների իրականացումը և հաշվետվողականությունը: Այսպես, կարևոր է պաշտպանական գերատեսչության կողմից զինված ուժերում իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումների և դրա արդյունավետության վերաբերյալ պարբերական հաշվետվություններ ներկայացնելը: Օրինակ՝ բանակում կարգուկանոնի ամրապնդման ու ոչ կանոնադրային հարաբերությունների դեմ պայքարի մասին անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը պարբերաբար հանդես գա հրապարակային հայտարարություններով, ինչպես նաև հստակ ու խիստ հանրային հաղորդագրություններ տարածի ոչ կանոնադրային հարաբերությունների նկատմամբ պաշտպանական գերատեսչության անհանդուրժողականության մասին:**

**Հարկ է նկատի ունենալ, որ բանակում կարգապահության ամրապնդման համար «պատասխանատվության խստացումը կբարձրացնի կարգապահությունը» սկզբունքով առաջնորդվելը լավագույն միջոցը չէ: Ոչ միշտ է պատասխանատվության խստությունը կանխում կամ բացառում անձի ոչ իրավաչափ վարքագիծը: Պատժի խստության աստիճանը պետք է մշտապես լինի գործած իրավախախտմանը խիստ համաչափ: Անթույլատրելի է խմբակային պատժամիջոցները, որոնց պարագայում պատասխանատվության է ենթարկվում նաև անձը, ով խախտմանն առնչություն չի ունեցել: Այս կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ զինծառայողների նկատմամբ կարգապահական տույժերից բացի Կարգապահական կանոնագրքով չնախատեսված պատասխանատվության այլ միջոց կիրառելու վերաբերյալ նախարարությունում բողոքներ չեն ստացվել: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունների, ինչպես նաև զորամասեր կատարած այցերի ընթացքում առանձին զինծառայողներ Պաշտպանի ներկայացուցիչներին մտահոգություններ են հայտնել Կարգապահական կանոնագրքով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ (օրինակ՝ կոլեկտիվ պատիժներ կամ պատժելու նպատակով՝ վազք, կքանիստ, ձգում և այլն): Սա անընդունելի է, քանի որ այն կարող է հանգեցնել**

միջանձնային հարաբերություններում խնդիրների, զորամասում բարոյահոգեբանական բացասական վիճակի ձևավորմանը, մարտական պատրաստության անկմանը՝ արդյունքում խարխիլելով զինվորական կոլեկտիվի համախմբվածությունը:

### Անհրաժեշտ զբաղվածություն

Զինվորական կարգապահության պահպանման գործում զգալի ազդեցություն ունի զինծառայողների անհրաժեշտ զբաղվածության ապահովման հանգամանքը: Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով զինծառայողի ծնողը հայտնել է, որ որդին հաճախ բողոքներ է ներկայացնում զորամասի կարգացուցակից՝ նշելով, որ ազատ ժամանակ շատ են ունենում: Տվյալ գործով, զինծառայողի ծնողը պնդել է, որ զորամասում տեղի ունեցած միջադեպի (զինծառայողի մահվան դեպք) պատճառներից մեկը հենց զինծառայողների զբաղվածության պակասն է եղել: Զորամասեր կատարած այցերի ընթացքում զինծառայողները ևս բարձրացրել են զբաղվածության ապահովման հարցեր: **Զինծառայողների զբաղվածության ոչ պատշաճ կազմակերպման և իրավախախտումների մեջ առկա է ուղղակի պատճառական կապ:** Մի կողմից, օրվա կարգացուցակի պահպանման նկատմամբ ցածր հետևողականության դրսևորումը, մյուս կողմից զինծառայողների զբաղվածության չապահովումը բացասաբար են անդրադառնում ոչ միայն մարտական պատրաստության, այլև զինծառայողի վարքագծի վրա: Ուստի, կարևոր է սերժանտական և սպայական անձնակազմի հետևողականությունը զինծառայողների համաչափ զբաղվածությունն ապահովելու հարցում: Մյուս կողմից, զինվորական կարգացուցակի գերհագեցվածությունը նույնպես կարող է հանգեցնել խախտումների: Անհրաժեշտ է մշտապես առաջնահերթ համարել այն իրողությունը, որ զորքերում կարգապահության վիճակի թուլացման գլխավոր պատճառներից է գերձանրաբեռնվածությունը, ինչը նաև ոչ այլ ինչ է, քան մեկի ուսերին երկուսի հասանելիք բեռը թողնելը:

Զբաղվածության հետ մեկտեղ կարևոր է նաև հանգստի ժամանակի ճիշտ պլանավորումը, որպեսզի զինծառայողները հանգիստը լրացնելու համար այլընտրանքային ուղիներ չփնտրեն:

**Հետևաբար, իրավախախտումների կանխարգելման «բանալիներից» է նաև զինծառայողի զբաղվածության ճիշտ կազմակերպումը:** Նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է հետևողականություն դրսևորել զինծառայողների օրվա կարգացուցակով սահմանված միջոցառումների իրականացման հարցում՝ բացառելով ինչպես գերծանրաբեռնվածությունը, այնպես էլ թերծանրաբեռնվածությունը:

Կարգապահական կանոնագրքով սահմանվում է, որ **խրախուսանքը զինվորական կարգապահության ապահովման սկզբունքներից է** (2-րդ հոդվածի 2-րդ մաս): Կարգապահական իրավունքը հրամանատարների, ինչպես նաև այլ զինծառայողների իրավասությունն է՝ ենթակա կամ ստորադաս զինծառայողի նկատմամբ կիրառելու խրախուսանքի կամ կարգապահական տույժի տեսակներ (5-րդ հոդվածի 1-ին մաս): Գաղտնիք չէ, որ զինվորների շրջանում դրական վարքագծի տարածումն ապահովելու համար անհրաժեշտ է բանակում խթանել խրախուսանքի կիրառման գործուն և արդյունավետ քաղաքականություն: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել զինծառայողների շրջանում դրական և օրինակելի վարքագծի դրսևորումների մանրակրկիտ և համակողմանի ուսումնասիրություն, և այնուհետ մշակել համապատասխան մեխանիզմներ նշված վարքագծի տարածման համար: Ճիշտ է, Կարգապահական կանոնագրքով սահմանված է, որ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման միջոց է և ծառայողական պարտականությունները ջանասիրաբար կատարելու, անձնական հատուկ վաստակի և դրական նախաձեռնություն ցուցաբերելու համար յուրաքանչյուր հրամանատար իրեն վերապահված իրավունքների սահմաններում պարտավոր է խրախուսել ենթակա զինծառայողներին, սակայն խրախուսանքի ինստիտուտի զարգացման համար դեռևս անելիքներ կան:

**Կարգապահական իրավունքը չպետք է դիտել լոկ պատժիչ մեխանիզմ:** Հակառակը՝ առաջին հերթին այն պետք է դիտարկել խրախուսանքի ինստիտուտի տեսանկյունից: Այսինքն, յուրաքանչյուր զինծառայողի առաջին հերթին պետք է վերաբերվել որպես խրախուսման, և թե կարգապահական տույժի ենթակա: Այս մոտեցումն էականորեն կարող է բարձրացնել զինվորի

**պատասխանատվության զգացումը, ամուր պահել կարգապահությունն ու մարտական ոգին:**

Հետևաբար, իրավախախտումների կանխարգելման, զինվորական կարգապահության մակարդակի անընդհատ բարձրացման ու կարգուկանոնի ապահովման համար անհրաժեշտ է զարգացնել խրախուսանքի միջոցներ կիրառելու ինստիտուտը, քանի որ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինճառայողների դաստիարակման հայտնի միջոց է:

## ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումների շրջանակներում մշտապես ներկայացնում է, ի թիվս այլնի, զինված ուժերում քաղաքացիների իրավունքների պաշտպանության վիճակը, առկա խնդիրները և առաջարկում դրանց լուծման ուղիները<sup>30</sup>: Նկատի ունենալով պաշտպանության և անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը սույն զեկույցում չի սահմանափակվում զուտ խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացնում է նաև դրանց լուծմանն ու ոլորտի կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Մինչև սույն արտահերթ զեկույցում ներկայացված հիմնական առաջարկներին անդրադառնալը՝ հարկ է ընդգծել կարևոր մի հանգամանք:

Կարգապահության բարձրացմանը միտված առաջարկներ և կոնկրետ լուծումներ մշտապես են ներկայացվել: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դեռևս 2017 թվականին մշակվել և շրջանառվել է «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի<sup>31</sup> և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի

<sup>30</sup> Տե՛ս, օրինակ, Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդումը, էջ 463-595:

<sup>31</sup> ա) իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ.

բ) կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգի և զինծառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինծառայողի ծանոթացմանը: Զինծառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում են նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինծառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները.

գ) ծառայողական քննության ընթացքում զինծառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինծառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները.

դ) բողոքարկման արդյունքում զինծառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինծառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

հրամանի<sup>32</sup> նախագծերը: Պաշտպանը զինվորական կարգապահության բարձրացմանը միտված հատուկ դիրքորոշում է ներկայացրել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե<sup>33</sup>:

Պաշտպանի առաջարկները թիրախային են, դրանց կենսագործումն ունի կարևոր նշանակություն զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ու ամրապնդման հարցերում: Նաև պետք է արձանագրել, որ առաջարկների իրականացման նկատմամբ մշտապես իրականացվում է հետևողական մշտադիտարկում:

Պաշտպանի դիրքորոշման կապակցությամբ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված պատասխանում նշվել է, որ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում Պաշտպանի գործունեությունը և կարևորել ներկայացված առաջարկությունների նշանակությունը:

Դրական քայլ էր այն, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կատարվեցին փոփոխություններ, որի արդյունքում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվեցին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարի 2012

---

<sup>32</sup> ա) զինծառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննություն անցկացնելու հիմք:

բ) սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

<sup>33</sup> Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ վճիռների կատարման և բարեկամական կարգավորման պայմանների վերահսկողության կանոնների 9-րդ կանոնի 2-րդ կետի հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Պաշտպանը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե էր ներկայացրել հատուկ դիրքորոշում՝ կապված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճիռի կատարման հետ<sup>33</sup>, և բարձրացված խնդիրների առնչությամբ Պաշտպանի հատուկ դիրքորոշման մեջ ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ: Մասնավորապես՝ ներկայացված դիրքորոշման մեջ նշվել է վերը նկարագրված օրենսդրական փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտությունը՝ որպես զինվորական կարգապահության ամրապնդման միջոց: Բացի այդ, կարևորվել է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացման անհրաժեշտությունը: Այդ նպատակով նշվել է, որ անհրաժեշտ է կարգապահական վարույթի հարուցման կարգ սահմանող իրավական ակտով ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումը հիմք է հանդիսանում ծառայողական քննություն սկսելու համար: Նշվել է նաև Պաշտպանության նախարարությունում շուրջօրյա թեժ գիծ ունենալու անհրաժեշտությունը:

թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում Պաշտպանի կողմից առաջարկված փոփոխությունները դեռևս չեն կատարվել<sup>34</sup>:

**Կարևորելով բանակում կարգապահության ամրապնդման հարցերում նոր մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտությունը, սույն զեկույցում բարձրացված խնդիրներին բազմակողմանի, ճկուն ու խորքային մոտեցում ցուցաբերելու հրամայականը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է ապահովել հետևյալ համալիր միջոցառումների իրականացումը.**

1) բարձրացնել հսկողությունը դպրոցների տնօրենների և ոստիկանության ծառայողների կողմից զորակոչային տարիքի քաղաքացիների վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկությունների (բնավորություն, վարք, սոցիալ-հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիք և այլն)՝ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ տրամադրելու ուղղությամբ,

2) ուսումնասիրել զինված ուժերի ամբողջ համակարգում մարդու իրավունքների խախտումների միտումները՝ նպատակ ունենալով որոշել, թե որքանով է գիտելիքների հնարավոր անբավարարությունը հանգեցնում մարդու իրավունքների խախտումների,

3) առաջին պլան բերել իրավախախտումների կանխարգելման միջոցառումների իրականացումը և հաշվետվողականությունը: Այստեղ կարևոր է պաշտպանական գերատեսչության կողմից զինված ուժերում իրավախախտումների դեմ պայքարի միջոցառումների և դրա արդյունավետության վերաբերյալ պարբերական հաշվետվություններ ներկայացնելը: Օրինակ՝ անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը պարբերաբար հանդես գա բանակում կարգուկանոնի ամրապնդման ու ոչ կանոնադրային հարաբերությունների դեմ պայքարի մասին հրապարակային հայտարարություններով, ինչպես նաև հստակ ու

---

<sup>34</sup> 2021 թվականի սկզբին շրջանառության մեջ է դրվել Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, ինչի արդյունքում նախատեսվում են սկզբունքային և համակարգային լուծումներ: Փոփոխությունների կատարման պարագայում, ի թիվս այլնի, նաև կապահովվի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված առաջարկների իրացումը, և այս տեսանկյունից կարևոր է միջոցներ ձեռնարկել առաջարկվող նախագիծը հնարավորին սեղմ ժամկետում ընդունելու ուղղությամբ: Մինչև ժամանակ, առաջարկվող փոփոխություններում ևս արձանագրվել են որոշ խնդիրներ, որոնք Պաշտպանի մանրամասն ուսումնասիրություններով և հստակ առաջարկներով սահմանված գրավոր ընթացակարգով տարվա ընթացքում ուղարկվել են Պաշտպանության նախարարություն:

խիստ հանրային հաղորդագրություններ տարածի ոչ կանոնադրային հարաբերությունների նկատմամբ պաշտպանական գերատեսչության անհանդուրժողականության մասին,

4) լայնորեն լուսաբանել հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում բացառիկ արիություն, անձնուրացություն և խիզախություն ցուցաբերած զինծառայողների կատարած գործը: Միանշանակ է, որ դա ոչ միայն զորքերում կարգուկանոնի ամրապնդման, փոխհարաբերությունների պահպանման, զինվորական կոլեկտիվի համախմբման, զինծառայողների դաստիարակության լավագույն միջոցներից է, այլ նաև լրացուցիչ խթան է բանակի մարտունակության բարձրացման և առաջադրված խնդիրների կատարման համար,

5) զորամաս մուտք գործելու առաջին իսկ օրից զինծառայողի հետ տանել նրա հարմարեցման գործընթացին ուղղված թիրախային աշխատանքներ, այդ թվում՝ իրավադաստիարակչական և բարոյահոգեբանական,

6) է՛լ ավելի հետևողական դարձնել զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացման աշխատանքները՝ նրանց տրամադրելով իրավունքների իրազեկման ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, կազմակերպել դասընթացներ,

7) բոլոր զորամասերն ապահովել սպա-հոգեբաններով, ամենօրյա ռեժիմով ուշադրություն դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին, սպա հոգեբանների համար պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ,

8) բոլոր զորամասերն ապահովել սպա-իրավաբաններով, զարգացնել նրանց կարողությունները հատկապես որակյալ ծառայողական քննություններ իրականացնելու առումով,

9) միջոցներ ձեռնարկել ենթասպայական և սերժանտական ժողովների ներուժը զարգացնելու, զորամասերում նրանց դերը բարձրացնելու ուղղությամբ,

10) ուսումնասիրել ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դասերի պլանը և կատարել զինված ուժերի կարիքներից բխող անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ (որպես ապագա սպաներ՝ զինված ուժերում

մարդու իրավունքներին վերաբերող հարցերին նրանց իրազեկվածությունն առավել կարևոր է),

11) կատարելագործել Ռազմական ոստիկանության ծառայողների գիտելիքներն ու կարողությունները, որպեսզի նրանք կարողանան զորամասերում համապատասխան աշխատանքներ իրականացնել, ներառյալ՝ բռնության կանխարգելման աշխատանքներ, և արդյունավետ համագործակցել զորամասի հրամանատարության հետ,

12) կարևորելով կարգապահության ամրապնդման հարցում Դատախազության բացառիկ դերը՝ անհրաժեշտ է հետևողականություն դրսևորել զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով դատախազների կողմից զորամասերի հրամանատարներին ներկայացվող միջնորդագրերի կատարման նկատմամբ: Այդ միջնորդագրերը չպետք է կրեն զուտ ձևական և ֆորմալ բնույթ, այլ դրանցով պետք է մանրամասն վերհանվեն և վերլուծվեն այն բոլոր պատճառներն ու պայմանները, որոնք նպաստել են հանցագործությունների կատարմանը,

13) դատախազական լիազորությունների բարեխիղճ իրականացմամբ հասնել նրան, որպեսզի հնարավորինս կրճատվի հանցագործության կատարման պահից մինչև դատավճռի կայացման պահն ընկած ժամանակահատվածը՝ ապահովելու համար նշանակվող պատժի արդյունավետությունը,

14) կարգապահական քաղաքականության ոլորտում բացառել զինծառայողների շրջանում օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ չհետապնդող անհավասար վերաբերմունքի ցանկացած դրսևորում,

15) թիրախային խմբերի (քրեական ենթամշակույթով հետաքրքրվող, ինքնավնասման հակում ունեցող և այլն) հնարավոր հակաիրավական վարքագիծը բացառելու նպատակով նրանց հետ տանել ակտիվ աշխատանքներ, այդ թվում՝ անհատական դաստիարակչական միջոցառումներ, նրանց վարքի մշտադիտարկումներ և այլն,

16) զինված ուժերում բռնության վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա,

17) զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ, այդ թվում՝ զինծառայողների հետ տարվող անհատական հոգեբանական աշխատանքների իրականացման միջոցով,

18) մշակել բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծմանը,

19) բացառել Կարգապահական կանոնագրքով չնախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու դեպքերը (օրինակ՝ կոլեկտիվ պատիժներ կամ պատժելու նպատակով՝ վազք, կքանիստ, ձգում և այլն),

20) հետևողականություն դրսևորել զինծառայողների օրվա կարգացուցակով սահմանված միջոցառումների իրականացման հարցում՝ բացառելով ինչպես գերծանրաբեռնվածությունը, այնպես էլ թերծանրաբեռնվածությունը,

21) ուժեղացնել հսկողությունը Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջները, այդ թվում՝ կարգապահական կանոնագրքով խախտումը նախատեսող կոնկրետ հոդվածները, ինչպես նաև կարգապահական տույժ տալու հրամանատարի իրավասությունը սահմանող կարգավորում նշելը պահպանելու ուղղությամբ,

22) ծառայողական քննությունների անցկացման գործընթացում առկա խնդիրները նվազագույնի հասցնելու նպատակով միջոցներ ձեռնարկել Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը հնարավորին սեղմ ժամկետում ընդունելու ուղղությամբ,

23) բացառել օրենքով չնախատեսված արարք կատարելու, մասնավորապես՝ զինվորական գրքույկը կորցնելու համար զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան,

24) բացառել Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանները խախտելու համար զինծառայողներին Կարգապահական կանոնագրքի 31-րդ

հողվածով նախատեսված զանցանք (Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) վերագրելու պրակտիկան,

25) Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք,

26) իրավախախտումներից տուժած անձանց հետ պարբերաբար անցկացնել հոգեբանական աջակցման աշխատանքներ՝ նրանց պահելով հատուկ ուշադրության ու հոգածության ներքո,

27) իրավախախտումների կանխարգելման, զինվորական կարգապահության մակարդակի անընդհատ բարձրացման ու կարգուկանոնի ապահովման համար զարգացնել խրախուսանքի միջոցներ կիրառելու ինստիտուտը, քանի որ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման հայտնի միջոց է:

**Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ նշված առաջարկների կենսագործումը և դրանց արդյունավետ ապահովումը կարող է զինված ուժերում էապես ամրապնդել ու բարձրացնել կարգապահության մակարդակը և հանրության շրջանում մեծացնել զինվորական ծառայության նկատմամբ համակրանքն ու հետաքրքրությունը, ինչպես նաև բարձրացնել զինծառայողների կարգավիճակը:**